

Բանավեճեր և ԲՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Дискуссии и ОБСУЖДЕНИЯ

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖՐԻԿԻ և ՆՐԱ ՏԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ*

Հ. Գ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

Ֆրիկը հայ աշխարհիկ գրականության ամենանշանավոր դեմքերից է։ Միջնադարյան հայ տաղերգուներից և ոչ մեկը ֆեոդալական հասարակության ներսում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական անհավասարությունը, իշխող դասակարգի՝ ֆեոդալների և հողեռականության ունեցած արատները այնպես համարձակ և անողոք կերպով չի մերկացրել, որքան Ֆրիկը։

Սակայն, դժբախտաբար, մինչ այժմ, անհրաժեշտ տվյալների բացակայության հետևանքով, նշանավոր բանաստեղծի կյանքի ու գործունեության շատ կողմեր մնացել են չուսաբանված։ Զեռագրերից մեզ հայտնի միակ վկայությունը Ֆրիկի մասին նրա տաղերից մեկի վերնագրում պահպանված հետևյալ տողերն են. «Ուտանաւոր ասացեալ է Ֆրիկն որդի Թագվորշին, եղբայր որդի Դոդոնոյի (ի) վերայ իւր մեղացն, (ի) վարս բանայսիրաց»¹։

Ֆրիկի տաղերի հավաքման, դրանց գիտա-համեմատական բնագրերի կազմման ասպարեզում մեծ ու գնահատելի աշխատանք է կատարել բանասեր Տիրայր արքեպիսկոպոս Մելիք-Մուշկատբարյանը։ Նրա ջանքերի շնորհիվ է, որ 1952 թ. Նյու-Յորքում լույս տեսավ Ֆրիկի «Դիվանը»։

«Դիվանի» հրատարակությամբ նոր հետաքրքրություն առաջ եկավ մեծ բանաստեղծի կյանքի և ստեղծագործության առանձին հարցերի նկատմամբ։ Լույս տեսան մի քանի գրախոսականներ, որոնց մեջ ուշագրավ գիտողություններ արվեցին Ֆրիկի կյանքի և ստեղծագործության առանձին մոթ և վիճելի հարցերի մասին, իսկ 1955 թ. Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակությամբ լույս տեսավ նաև Աշոտ Հովհաննիսյանի «Ֆրիկը պատմաբանական լույսի տակ» վերնագրով արժեքավոր և ուշագրավ ուսումնասիրությունը²։

Ֆրիկի «Դիվանի» հրատարակության, նրա առթիվ գրված գրախոսականների և Ա. Հովհաննիսյանի ուսումնասիրության կապակցությամբ ցանկանում ենք բանաստեղծի կյանքի և նրա առանձին տաղերի մասին մի քանի գիտողություններ անել, ճշտել նախորդ ուսումնասիրողների կատարած առանձին սխալները, պարզել նրա ստեղծագործությունների հետ կապված վիճելի որոշ հարցեր։

* Սույն հոդվածի այն մասերը, որոնք վերաբերում են «Ընդդէմ ֆալաքին», «Վասն դալեհի և բրջի» և «Դանդաղ» տաղերին, կրճատումներով, որպես առանձին հոդված («Ֆրիկի երեք տաղերի մասին» վերնագրով), լույս են տեսել «Սովետական գրականություն» ամսագրի 1956 թ. № 12-ում։

¹ Տե՛ս Ն. Ակինյանի Ֆրիկի «Դիվանի» առթիվ գրած գրախոսականը, «Հանդէս» ամսօրեայ, 1953, էջ 310։

² Աշոտ Հովհաննիսյան, Ֆրիկը պատմաբանական լույսի տակ, Երևան, 1955։



Ֆրիկի կյանքը և ստեղծագործությունը ուսումնասիրողները միշտ էլ հատուկ ուշադրություն են դարձրել «Վասն Արդուն զանին և Բուզային» բանքի վրա, քանի որ այն կարևոր հիմքերից մեկն է հանդիսանում Ֆրիկի ապրած ժամանակաշրջանը որոշելու հարցում: Մինչև Ա. Հովհաննիսյանի ուսումնասիրության լույս տեսնելը, բոլոր ուսումնասիրողները, որոնց թվում է՝ Մ. Աբեղյանը, և՛ բանասեր Տիրայրը, այս բանքի առանձին մասերը սխալ են բացատրել՝ ճիշտ չհասկանալով աչնտեղ մի քանի անգամ գործածված «մասաս» և «մասասչի» բառերի իմաստը:

«Ըստ գործածության այս բառը («մասասչի»),— գրում էր հանգուցյալ Մ. Աբեղյանը,— նշանակում է՝ իշխանավոր, կառավարիչ, վերակացու, պաշտոնյա, իսկ «մասաս»՝ իշխանություն, կառավարություն (թաթարական), վերակացություն, գուցե և կողոպտում, կամ սրանց նման մի բան: Մասասչիները, ըստ Ֆրիկի, կեղեքիչներ են»¹:

Այս երկու բառերը հակադրելով իրար, բանասեր Տիրայրը գտնում է, որ սրանք ծածկալեզվի բառեր են, ըստ որում՝ «մասաս» նշանակում է՝ «հայ, ազգակից, արյունակից, ցեղակից», իսկ «մասասչիք»՝ «ոչ հայ, օտար, թշնամի»: Նա մի այլ տեղ սխալ կերպով Ֆրիկին վերագրված մի տաղի տնագրության տառերից կազմվող «Յովասափ Մազազ» անունը նույնացնելով Ֆրիկի հետ, կարծել է, որ «մասասը» բանաստեղծի երկրորդ անունը կամ կեղծանունն է²:

Ա. Աբրահամյանը Ֆրիկի «Դիվանի» հրատարակության առթիվ գրած իր գրախոսականում գտնում է, որ «մասաս» բառը պարսկերեն «մոասաս» բառն է, որ նշանակում է՝ «գործ, ձեռնարկ, նպատակագրում» իսկ «մասասչի»՝ գործակալ, հավանական է մոնղոլական հարկեր հավաքող գործակալ³:

Ա. Հովհաննիսյանը իր ուսումնասիրության մեջ, հենվելով պարսիկ նշանավոր պատմիչ Ռաշիդեզզիյի վկայությունների վրա, ոչ միայն մերժում է «մասաս» և «մասասչի» բառերին տրվող վերոհիշյալ անհիմն բացատրությունները, այլև միանգամայն ճիշտ կերպով ցույց է տալիս, որ «մասաս» և «մասասչի» տերմինները կապված են մոնղոլական բանակի մատակարարման գոյություն ունեցող պրակտիկայի հետ⁴:

Ա. Հովհաննիսյանը Ա. Աբրահամյանի կողմից «մասաս» և «մասասչի» բառերին տրված բացատրությունների հետագա ճշտումը թողնելով իրանագետներին և մոնղոլագետներին, այնուամենայնիվ գտնում է, որ այստեղ «սխալ է արվում հայտ բերել «մասաս» բառի սկզբնական կամ ընդհանուր իմաստը»⁵: Մենք գտնում ենք, որ Ա. Աբրահամյանի «մասաս»—«մասասչի» բառերի ստուգաբանական բացատրությունները հիմնավոր չեն և անհավանական են: Նախ նկատենք, որ Ռաշիդեզզիյն այս բառերը ոչ թե գործածում է «մոս-

¹ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 2-րդ, Երևան, 1946, էջ 262:

² Դիվան, Քննական ուսումնասիրություն, էջ 97—105, ծանոթագրություն, էջ 662—663:

³ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյանի Ֆրիկի «Դիվանի» առթիվ գրած գրախոսականը, «Էջմիածին» ամսագիր, 1954, հունվար, էջ 35:

⁴ Ա. Հովհաննիսյան, Նշված աշխատությունը, էջ 14 և հտ.:

⁵ Նույն տեղում, էջ 16—17:

սաս»—«մոսասաչի» ձևով, այլ «մասաս»—«մասասաչի» ձևով: Անշուշտ, Ռաշի-դեդդիներ, լինելով պարսիկ, չէր կարող չիմանալ սլաոսկերեն հասարակ ու սովորական մի բառի՝ «մոսասա» բառի ուղղագրությունը: Երկրորդ՝ Ռաշիդեդդինը մի քանի անգամ խոսում է «մասասի գործի», «մասասի գործին» կցված նախալների և բիթիքչիների» մասին²: Պարզ է, որ եթե իրոք «մասաս»-ը նշանակեր «մոսասա», այսինքն՝ «գործ, ձեռնարկ», այն ժամանակ աննպատակ էր նրան կցել նաև «գործ» բառը:

Ռաշիդեդդինը մեզ հետաքրքրող բառերը գործածում է հինգ անգամ, ըստ որում չորս անգամ «մասաս», իսկ մեկ անգամ՝ «մասասաչի» ձևով: Պարսից պատմիչի վկայություններից երևում է, որ «մասաս» էր կոչվում մոնղոլական բանակի զինահանդերձավորման գործը, իսկ «մասասաչի»՝ զինահանդերձանք մատակարարողը (հմմտ. «բոստան-բոստանչի», «դուքան-դուքանչի», «ղաղան-ղաղանչի», «գեմիր-գեմիրչի» և այլն): «Մասաս» տերմինը գործածում է նաև Մուհամմեդ իբն Հինդուշահ Նախլանին: Սա, իստեյլով սահիպ դիվան Շեմսեդդին Մուհամմեդ Զուլեյնու գործունեության մասին, գրում է. «Ինչպես իսանի, այնպես նաև խաթունների, արքայազնների, էմիրների և զինվորականության զարաբյարադից, մասասխանների, ախթախանների և այլ գործերից ավելացող միջոցները նա կուտակում էր թագավորական գանձարանում»³: Այս վկայությունից հետևում է, որ «մասասխան» էին կոչվում զինահանդերձանքի արտադրության արհեստանոցները կամ պահեստները:

Ռաշիդեդդինը իր 26-րդ պատմվածքում հաղորդում է հետևյալը: Աբաղա խանի (1265—1282) ժամանակ մի քանի «օրթախ»-ներ, այսինքն՝ առևտրական ընկերության անդամներ, լավ գեներ ու ձիեր են բերում: Զինահանդերձանքի ու ձիերի հայթայթման գործին հսկող կառավարիչներից նրանք բերած գեների ու ձիերի դիմաց ստանում են խոշոր գումար: Նրանց օրինակը վարակիչ է լինում: Կարճ ժամանակից հետո մի քանի հազար մուսուլմաններ ու քրիստոնյաներ, թողնելով իրենց գործը, սկսում են զբաղվել բանակի մատակարարման շահավետ գործով: Որովհետև զբաղվող շատերը սեփական միջոցներ չունեին, ուստի հարուստ մարդկանցից իրենց ընկերակիցներ էին ձարում և կամ նրանցից բարձր տոկոսով կամ շահարաժնով փող վերցնում:

Մոնղոլական բանակին մասնավոր կարգով գեներ, ձիեր և հանդերձանք մատակարարողները կամ մասասաչիները, հատկապես սկզբնական շրջանում, մեծ հարստություն են ձեռք բերում: Իրենց հանձնած գեների ու ձիերի դիմաց նրանք համապատասխան պետական պաշտոնյաներից կամ մոնղոլ էմիրներից ստացադրեր էին ստանում և դրանք ներկայացնում մոնղոլական պետության հարկային-ֆինանսական գրասենյակին, այսինքն «դիվան»-ին՝ վճարման համար: Քանի որ դիվանում շատ հաճախ կանխիկ գումար չէր լինում, դրա համար էլ մասասաչիներին պարտամուրհակ, վճարման դիր («բարաթ») էր տրվում, երկ-

¹ Рашид-ад-дин, Сборник летописей, т. III, М.—Л., 1917, էջ 288—289, 300—301:

² Նույն աեղում:

³ Մուհամմեդ իբն Հինդուշահ Նախլանու վկայությունները վերցված են նրա «Դաստուր-ալ-Քյաթիր» («Գրագրի ուղեգրություն») աշխատությունից, որի համեմատական տեքստը կաղմել է արևելագետ Վ. Գ. Տիգենհաուզենը: Սրա ձեռագիրը այժմ պահպանվում է ՄՍՌ-Պ ԳԱ Արևելագիտական ինստիտուտի արխիվում (ЦБАК, Ленинград, архив Тизенгаузена, фонд, 52, хр. 15): Մուհամմեդ իբն Հինդուշահ Նախլանու վկայությունները թարգմանությունը հանդերձ մեզ է հանձնել է ընկ. Ն. Փափաղյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

րամասերի կառավարիչներին ներկայացնելու և պետական հարկերի հաշվին իրենց հասանելիք գումարը ստանալու համար¹։

Հանձնված սպառազինության նկատմամբ պետական հաշվառման և վերահսկողության բացակայության հետևանքով, շուտով առաջ են գալիս մեծ թվով շարաշահումներ և կեղծիքներ։ Մասասչիններից շատերը, բանակին առանց որևէ բան հանձնելու, կաշառքով, համապատասխան պետական պաշտոնյաներից կամ մոնղոլ էմիրներից մեծ գումարների ստացագրեր են ձեռք բերում։ Այնուհետև նրանք այդ ստացագրերը ներկայացնում են դիվանի բիթիքչիներին, որոնք, լավ տեղյակ լինելով գործի հանգամանքներին, սակայն և լուծվյալ համար կաշառք վերցնելով՝ երկրամասից կանխիկ փող ստանալու համար նրանց տալիս են յաուլիկ (հրամանագիր) և բարաթ։ Ավելին. մասասչիններից շատերը, որոնք քիչ թե շատ մոնղոլներն են գրել գիտեին, նստած իրենց տանը, սկսում են մոնղոլ էմիրների անունից կեղծ ստացագրեր պատրաստել և կաշառքով ձեռք բերել պետական պարտամուրհակներ։ Նման կեղծիքներով մասասչինները ձեռք են բերում այնպիսի ահռելի գումարների հասնող պարտամուրհակներ, որ դրանց վճարման համար նույնիսկ չէր կարող բավականացնել ամբողջ երկրի ոսկին և արծաթը։

Նրբ կեղծիքներն ու շարաշահումները անցնում են ամեն չափ ու սահման, սահիպ դիվան (դիվանի պետ, վեզիր) Շեմսեդդին Մուհամմեդը հավաքում է մասասչիններին և հայտարարում նրանց. «Այնպիսի գումար, որպիսին դուք սպասում եք ստանալ, երկրագնդում գոյություն չունի»։ Նա խոստանում է մասասչինների ունեցած պարտամուրհակների դիմաց բավարարել 10 թումանին 2 թուման հաշվով, այսինքն՝ 20 տոկոսի չափով, սակայն պայմանով, որ ստանալիք գումարի կեսը տրվի իրեն՝ ցույց տված աջակցության համար։ Մասասչինները համաձայնում են։ Սակայն Շեմսեդդին Մուհամմեդ Ջուվեյնին սլայմանը չի կատարում. պետական գանձարանից դուրս գրված կանխիկ դրամը ինքը յուրացնելով, նա մասասչիններին հասանելիք բոլորին վճարում է իրենով և մթերքներով, որոնց արժեքը չէր հասնում նույնիսկ խոստացված գումարի մեկ չորրորդ մասին։

Նրբ հայտնի է դառնում մասասչինների և Սահիպ Դիվանի միջև կայացած գործարքը և լուր է տարածվում, թե մասասի համար գումարները պետք է վճարվեն, բոլոր նրանք, ովքեր իրենց դրամը շահաբաժնով կամ տոկոսով տվել էին մասասչիններին և մի ժամանակ հրաժարվել էին այլևս նրանց վարկավորել, վերսկսում են վարկավորումը՝ դրամով, իրերով և մթերքներով։ Իսկ մասասչիններից շատերը խրախուսված կայացած գործարքից սկսում են կեղծիքների, կաշառքի և այլ միջոցներով կրկին ձեռք բերել ահռելի գումարների հասնող ստացագրեր և բարաթներ։

Որոշ ժամանակ անց, երբ մասասչինները սլետովթյունից այլևս ոչինչ չեն կարողանում ստանալ, նրանց հետ գործարքի մեջ մտած կամ շահաբաժնով ու բարձր տոկոսով փող տված հարուստներից շատերը հրաժարվում են այլևս

¹ Որ իսկապես «մասասի» համար վճարման գիր (բարաթ) էր տրվում երկրամասերի վրա՝ երևում է նաև Մուհամմեդ իբն Հինդուշահ Նախջևանու վկայությունից։ Նա գրում է. «Մեծ սահիպ, փառապանծ վեզիր խոջա Շեմսեդդինը թող այս մասին տեղեկանալուց հետո, իր մոտ գտնվող մասասի դիվանի մատյանները, որոնք հանձնված են իրեն, քանի զեռ մասասի գումարները դանձելու համար բարաթները ուղարկված են վիլայեթները, անմիջապես բերի այստեղ»։

նյութապես օգնել մասասաշիններին: Իսկ նրանք, ովքեր արդեն իրենց ամբողջ նարստությունը տվել էին մասասաշիններին, բարաթներում նշված գումարները ստանալու հույսով, թողնում են իրենց գործը և ընկերակցում նրանց թափա-
սումներին: Քանի որ բարաթները զրված էին երկրամասերի վրա և երկրամաս-
երի կառավարիչներից այնքան էլ հեշտ չէր գումար ստանալը, մասասաշինները
և նրանց ընկերակիցները այս կամ այն մոնղոլ արքայազնից, խաթունից կամ
լմիրից, վարձատրման և կերակրման պայմանով, զինված խմբեր էին վերց-
նում: Այս խմբերը վարձատրելու և կերակրելու համար մասասաշինների ընկերա-
կիցները ստիպված են լինում ոչ միայն վաճառել կամ գրավ դնել իրենց կալ-
վածքները, այլև իրենց հերթին վաշխառուներից բարձր տոկոսով պարտքեր
վերցնել:

Հատկապես Արղուն (1284—1291) և Քեյդաթու (1291—1295) խաների
ժամանակ մասասաշինները և նրանց ընկերակիցները, իրենց ունեցած բա-
րաթների գումարը ստանալու հույսով, անընդհատ թափառումներ են կատարում
երկրամասերում, բայց ոչինչ չեն կարողանում ստանալ: Եթե, այնուամենայ-
նիվ, նրանց հաջողվում է որոշ բան էլ ստանալ երկրամասերի կառավարիչնե-
րից, ապա դա նույնիսկ չի բավականացնում իրենց ուղեկցող զինված խմբերի՝
թիկնապահների կերակրմանը: Ի վերջո, սրա հետևանքը լինում է այն, որ գրեթե
բոլոր մասասաշինները, իրենց ընկերակիցների հետ միասին, անանկառալով մո-
րացիկների զրույցյան են հասնում: Խվելին, նրանցից շատերը, չկարողանալով
մձարել ծանր պաշտքերը, իրենց կանանց և զավակների հետ դառնում են
պարտատերերի գերիներ:

1299 թվականին Ղազան խանի (1295—1304) կատարած ռեֆորմով
վերացվում է բանակի մատակարարման գոյություն ունեցող սիստեմը և շեղ-
լալ են հայտարարվում մասասաշիններին տրված բոլոր բարաթները:

Ռաշիդեդդինի պատմածներից երևում է, որ հատկապես մեծ չափով տու-
ժում են այն մասասաշիններն ու նրանց ընկերակիցները, որոնք իրապես մեծ գու-
մարների հստակ սպառազինություն էին մատակարարել մոնղոլական բանա-
կին:

Այժմ տեսնենք թե ինչ է ասում նույն այս մասասաշինների և նրանց ընկերա-
կիցների մասին Ֆրիկը: Բանաստեղծը իր տաղի մեջ, Արղուն խանի դեմ
Բուղայի կազմակերպած դավադրության և նրա ջախջախման մասին խոսելուց
հետո, գրում է.

«Տէ՛ր, դու տեսար յերկնից ի վայր
Զինչ քո ծառայքն քարշեցին:
Դեմ չի մընաց ազբիւր ու գետ,
Որ լացուցածքս չի խմեցին,
Դեմ չի մնաց լեռներ ու դաշտք,
Որ մասասաշիքն չկոխեցին:
Զըմեռն առան՝ յերթին լալով
՝Ի ամառն ի քոչն խաշէին,
Քրսան տարի դար քաշեցաք,
Որ հալեցաւ ոսկր ու մորթի»¹:

¹ Ֆրիկ, Դիվան, Լե, 62 — 71 (էջ 424): Հմմտ. Ֆրիկ. Բանաստեղծություններ, Երևան, 1941, XXXVIII, 61—70 (էջ 211):

Ուսումնասիրողները, բացառությամբ Ա. Հովհաննիսյանի, Ֆրիկի բանաստեղծության այս հատվածը սխալ են բացատրել և մասասշիններին կողոպտիչներ, կեղեքիչներ կամ հարկահավաք պաշտոնյաներ են համարել ոչ միայն «մասասշի» բառի իմաստն իրենց համար պարզ չլինելու, այլև «Գեմ չի մընաց լեռներ ու դաշտք, որ մասասշիքըն չկոխեցին» տողերին բացասական իմաստ վերագրելու պատճառով: Նրանք այս տողերը բացատրել են այն իմաստով, որ իբր թե մասասշինների հարձակումից ու կողոպտումներից զերծ չի մնացել որևէ վայր: Մինչդեռ այս տողերի իմաստը այն է, որ մասասշինները այնքան շարձարանքներ ու տանջանքներ են կրել, որ չի մնացել որևէ լեռ ու դաշտ, որտեղից նրանք չեն անցել կամ ոտի տակ տվել: Եթե իրոք, Ֆրիկը այստեղ «կոխել» բառը գործածած լիներ թշնամու հարձակման, թալանի և ավերումի իմաստով, այն ժամանակ «լեռներ ու դաշտք»-ի փոխարեն պետք է գրեր «քաղաք և դիւղք» կամ նման մի բան, որովհետև կողոպտուտի նպատակով լեռներն ու դաշտերը «կոխելը», այսինքն նրանց վրա հարձակվելը աննպատակ և անիմաստ էր: Ամբողջ թյուրիմացությունը վերանում է, երբ «կոխել» բառը հասկանում ենք ոչ թե փոխաբերական, այլ իր իսկական իմաստով:

Մ. Աբեղյանը ենթադրել է, որ մեջ բերված հատվածում նշված «քսան տարի դար քաշեցաք» արտահայտությունը վերաբերում է 1260—1261 թթ. հայ վրացական ապստամբությունից հետո ընկած ժամանակաշրջանում հայ ժողովրդի կրած տառապանքներին¹: Ա. Հովհաննիսյանը, իրավացի կերպով ժխտելով Մ. Աբեղյանի այս ենթադրությունը, գտնում է, որ Ֆրիկը նշել է իր քսանամյա տառապանքների մասին, աչքի առաջ ունենալով 1269—1289 թվականների «մասասի» հետ կապված տառնապալից իրադարձությունները²: Մեջ բերված հատվածի վերջին երկու տողում Ֆրիկը ակնարկում է մասասշինների ձեռքում գտնվող պարտամուրհակների դիմաց պետությունից դուրս ստանալու հետ կապված դժվարությունների, տառապանքների մասին: Այստեղից հետևում է, որ մասասշինների առջև պարտամուրհակների վճարման գործում դժվարություններ են հարուցվել սկսած 1269 թվականից:

Ֆրիկը այս բանաստեղծության մեջ մի այլ տեղ գրում է.

«Ապա զայս այլ կամիմ ասել,
Զինչ մասասշիքըն գործեցին:
Խիստ յուսացան ի յանցաւորս
Եւ պարծեցան յիրեանց մըտին,
Թէ մեք շինենք շատ մի թուման,
Երթանք կախենք զորքն ու զայրին:
Հետ ընկերաց ծուռ են կացել
Եւ շատ մարդկաց տուն քակեցին...
Զինչ որ տըւել էր Տէրն նոցա,
Զայն գոհութեամբ հերիք շարին»³:

¹ Մ. Աբեղյան, *Նշված աշխատությունը*, էջ 263:

² Ա. Հովհաննիսյան, *Նշված աշխատությունը*, էջ 27, 87:

³ Դիվան, Լե, 114—126 (էջ 425—426): Հմմտ. Բանաստեղծություններ, XXXVIII, 111—122 (էջ 212—213):

Ֆրիկը այս հատվածում կշտամբում է մասասչիններին այն բանի համար, որ նրանք իրենց մտքում պարծեցել են, թե ձեռք կբերեն շատ թումաններ, և որ իրենց ընկերակիցների, այսինքն՝ մասասչիններին շահաբաժնով փող տված հարուստ մարդկանց հետ խարդախությամբ են վարվել և նրանցից շատերի տունը քանդել, այսինքն՝ սնանկացրել են: Վերջին երկու տողում Ֆրիկն ակնարկում է մասասչինների կատարած կեղծիքները և շարաշահումները:

Ինչպես տեսնում ենք, Ֆրիկի այս հատվածը նույնպես ճիշտ և ճիշտ կերպով համընկնում է մասասչինների և նրանց ընկերակիցների մասին Ռաշիդեղի հաղորդած տեղեկությունների հետ:

Այստեղ նշենք նաև, որ այս հատվածում գործածված «թուման» այժմյան պարսկական փողի միավորը չէ, ինչպես սխալմամբ կարծել է բանասեր Տիրայրը¹, այլ մոնղոլական շրջանի փողի մեծ միավորը, որը հավասար էր 10.000 «դեկանի» (ըստ ակադեմիկոս Վ. Բարտոլդի հավասար է 7.500 ոսկի ուրբու)²:

Բերված հատվածից երկու տող հետո Ֆրիկը շարունակում է.

«Հանց խարազանաւ Տէրրն ծեծեց,
Որ չիմացան զինչ գործեցին,
Յորժամ դիտաց, թէ խրատեցան
Եւ զրդջացան յիւրեանց մրտին,
Տէրրն դարձեալ ողորմեցաւ
Փոխրէնք արար հակառակին.
Հանց սատակեաց Աստուած զնոսա
Զինչ մասասչեց շար կամէին»³:

Ա. Հովհաննիսյանը արդեն ճիշտ կերպով ցույց է տվել, որ Մ. Աբեղյանը բանաստեղծության այս հատվածը սխալ է բացատրել⁴: Հակառակ վերջին քառատողի իմաստի պարզություն, Մ. Աբեղյանի կարծիքով այստեղ ասված է, թե աստված սատկեցրեց մասասչիններին: Մինչդեռ իսկապես հեղինակն ասել է՝ աստված սատկեցրեց նրանց, ովքեր մասասչինների շարն էին կամենում:

Ովքեր էին մասասչիններին շար կամեցողները: Այս տաղից հետևում է, որ դրանք Արդուն խանի դեմ դավադրություն կազմակերպողներն էին: Մեջ բերված հատվածին անմիջապես հաջորդող տողերից տեղեկանում ենք նաև, որ այդ շարակամների գլխավորը եղել է Բուղան⁵:

Ֆրիկը նորից մասասչիններին և նրանց ընկերակիցներին նկատի ունենալով գրում է.

«Յիւրեանց բարեացըն զրրկեցան,
Դէմ յԱստուծոյ շատ մի յացին,

¹ Տե՛ս Դիվանի բառարանը, էջ 645:

² Бартольд В., Персидская надпись на стене Анийской мечети Мануче, СПб., 1911, էջ 16—19:

³ Դիվան, Լե, 128—135 (էջ 426): Հմմտ. Բանաստեղծ., XXXVIII, 125—132 (էջ 213):

⁴ Ա. Հովհաննիսյան, Նշված աշխատությունը, էջ 31—32:

⁵ Դիվան, նույն տեղում, 136—139 տողերը: Հմմտ. Բանաստեղծ., նույն տեղում, 133—136 տողերը:

Գանգատ աստին ի խոր սրբոյն,
 Հառաչանօք զայս ասացին.
 «Տէ՛ր, մի՛ հաներ զմեզ ի կենացս,
 Մինչ որ մեր պարտքըս վըճարին»¹:

Ֆրիկը այս տողերով ուղղում է ասել, որ մասասչիները իրենց բարիքներից, այսինքն՝ ունեցվածքից զրկվեցին և սպադատեցին աստծուն, ասելով՝ «Աստված, մեզ մի մեռցրու, մինչև որ մեր պարտքերը վճարվեն»: Աստծուն ուղղված խոսքի մեջ գործածված «մեր պարտքըս վըճարին»-ը չպետք է հասկանալ ոչ հոգևոր պարտքի և ոչ էլ վրեժի իմաստով, ինչպես սխալմամբ կարծել է Մ. Աբեղյանը², այլ՝ նյութական-դրամական պարտքի իմաստով:

Վերոհիշյալ հատվածից անմիջապես հետո կարդում ենք.

«Զինչ մասասչի կան՝ հաւասար
 Ամենքեան թող ժողովին,
 Որ աղաչենք ըզՏէր Աստուած,
 Որ ցուցանէ Արդուն զանին,
 Թէ չէ աղէկ այն արտասուքն,
 Որ թափեցին օրթախրնին»³:

Նախ նկատենք, որ Ֆրիկի «Դիվանի» հրատարակողը այս հատվածի վերջին՝ «օրթախրնին» բառը, հակառակ ձեռագրում դրա ճիշտ օգտագործմանը, անհիմն ու սխալ կերպով «ուղղել» և դարձրել է անձնանուն՝ «Օրտուղանին»:

Բերված հատվածի իմաստն այս է. ինչքան որ մասասչիներ կան, բոլորը թող հավաքվեն, որպեսզի բանաստեղծի հետ միասին աղաչեն աստծուն, որ նա հասկացնի Արդուն խանին, թե «օրթախրների», այսինքն՝ մասասչիների ընկերակիցների թափած արտասուքը լավ բան չէ:

Ա. Հովհաննիսյանը իր ուսումնասիրության մեջ հենվելով Ռաշիդեգդինի վկայությունների վրա, ինչպես և նկատի առնելով այն հանգամանքը, որ «օրթախ» բառը նշանակում է առևտրական ընկերություն և առևտրական ընկերության մասնակից անդամ, հաճախ այդ («օրթախ») բառը նույնացնում է «մասասչի» բառի հետ կամ այս երկու բառերի միջև հավասարության նշան դնում⁴: Եթե Ռաշիդեգդինի վկայությունները այս կամ այն կերպ որոշ հիմք տալիս են այս երկու բառերի իմաստների նույնացման համար, ապա, կարծում ենք, որ նույնը չի կարելի պնդել Ֆրիկի վկայությունների նկատմամբ: Ֆրիկի մոտ երկու անգամ օգտագործված «օրթախ» բառը գործածված է ոչ թե առևտրական ընկերության, առևտրական ընկերության անդամի կամ «մասսուչի»-ի իմաստով, այլ պարզապես «ընկեր, ընկերակից», ավելի ճիշտը՝ «մասսուչի ընկերակից» իմաստով: Ֆրիկի այս բանքի լուրջ ընթերցումը ցույց է տալիս, որ բանաս-

¹ Դիվան, նույն տեղում, 144—149 տողերը: Հմմտ. Բանաստեղծ., նույն տեղում, 141—146 տողերը:

² Մ. Աբեղյան, նույն աշխատությունը, էջ 266:

³ Դիվան, Լե, 150—155 (էջ 427): Հմմտ. Բանաստեղծ., XXXVIII, 147—152 (էջ 214):

⁴ Ա. Հովհաննիսյան, նշված աշխատությունը, էջ 21—22, 34:

տեղծի տարրերով լցված է դնում մասաստիների և նրանց օրթախների միջև: Ըստ Ֆրիկի ոչ թե մասաստիների, այլ նրանց օրթախների անեծքով է աստված պատժել մասաստիների շարակամներին. մասաստիներն են, որ «հետ ընկերաց ծուռ են կացել»: Նկատի ունենալով այս՝ գտնում ենք, որ Ֆրիկը «օրթախ» բառի տակ հասկանում է մասաստիներին շահարածնով փող տված մարդկանց:

Մեր կողմից քաղվածաբար մեջ բերված հատվածներից և Ֆրիկի այս տաղի այլ մասերից դժվար չէ նկատել, որ բանաստեղծի համակրանքը մասաստիների, առավել ևս նրանց օրթախների կողմն է:

Այդ համակրանքը բացատրվում է նրանով, որ Ֆրիկը եղել է մասաստիներից մեկի «օրթախը», այսինքն՝ մեկն այն հարուստ մարդկանցից, որը շահարածնով փող է տվել մասաստիներից մեկին:

«Բանաստեղծի տողերը, — ասում է Ա. Հովհաննիսյանը, — հիմք չեն տալիս ասելու, թե նա ինքը ժամանակին պետք է եղած լինի մասաստի գործով ղրաղված օրթախներից մեկը: Սակայն, նրա մի շարք սկնարկով լցվածներից պարզ է, որ նա մեկն էր նրանցից, որոնց պարտական էին մնացել օրթախները և սրանց անվճարունակության հետևանքով ընկել էին մեծամեծ պարտքերի տակ»¹:

Դժվար չէ նկատել, որ Ա. Հովհաննիսյանի եզրակացության և մեր ասածի միջև էական տարրերով լցված չկա: Միակ տարրերով լցվածն այն է, որ Ա. Հովհաննիսյանը հոմանիշ է համարում «օրթախ» և «մասաստի» բառերը, իսկ մենք «օրթախ» բառը հասկանում ենք «մասաստի ընկերակից» իմաստով:

Որ իրոք Ֆրիկը սերտ առնչություն է ունեցել «մասաստի»-ի գործի և մասաստիների հետ, երևում է ոչ միայն նրանից, որ այս բանաստեղծության մեջ տաղերգուն հաճախ իրեն էլ մասնակից է դարձնում մասաստիների կրած տանջանքներին և նրանց գործի նկատմամբ անմիջական շահագրգռվածություն է հանդես բերում, այլև նրա ուղղակի մի վկայությունից: Այս բանաստեղծության նախավերջին քառատողում Ֆրիկն իր մասին գրում է.

«Աւուրբս անցաւ հետ մասաստիս,
նզըր չի կայ, հուն չերեին.
Յաւ երկարեց 'ւ ի յոսկր անցաւ,
Այլ չի մընաց համրերութիւն»²:

Այս հատվածի առաջին տողում Ֆրիկը ոչ թե ուղում է ասել՝ «օրերս անցան իմ ձեռնարկների, գործերի, իմ երազանքի հետ միասին», ինչպես սխալ կերպով կարծել է Ա. Աբրահամյանը, այլ պարզապես ասում է. «օրերս, կյանքս անցավ մասաստի գործի հետ», դուցե և՛ «օրերս, կյանքս անցավ իմ ընկերակից մասաստիիս հետ»:

Այդ ի՞նչ ցավ է, որ երկարել և անվանի տաղասացի ոսկրին է անցել, և նրա մոտ այլևս համրերություն չի թողել: Այդ ցավը պարզապես իր մասաստիին շահարածնով տված փողերը ետ չստանալու, և դրա հետևանքով խիստ աղքատանալու, մուրացիկի դրություն հասնելու ցավն է: «Նզըր չի կայ, հուն չերեին» ասելով Ֆրիկը սկնարկում է, որ մասաստիների շար կամեցողների

¹ Ա. Հովհաննիսյան. *Նշված աշխատությունը*, էջ 34:

² Դիվան, Լե, 184—187 (էջ 428): Բանաստեղծ., XXXVIII, 181—184 (էջ 215):

սպանությունից հետո էլ դեռևս ոչ մի լուր, հույս չկա պարտամուրհակների վճարման մասին:

Որ իսկապես Ֆրիկը եղել է մասսաչիներից մեկի «օրթախը»—ընկերակիցը, էրեւում է նաև նրա տաղերի մեջ պահպանված մի շարք կողմնակի վկայություններից:

«Ի վերայ ծովացեալ մեղաց մարդոյ» տաղում Ֆրիկն իր մասին ասում է.

«Հողիս է տրտում նրստեր, զով տեսնու՞ լալով դանդառի.

Թ՛ եղայ հարամիկ ընկեր, թալանեց ՚լ արար դիս գերի»¹:

Այստեղ Ֆրիկի նշած ընկեր-հարամին, այսինքն՝ ավազակ-կողոպտիչը ոչ այլ ոք է, եթե ոչ նրա ընկերակից մասսաչին, որը բանաստեղծից շահարած-նով վերցրած զրամը չվերադարձնելով՝ թալանել ու սնանկացրել է նրան:

«Ողբանք փոշիմանութեան» տաղում կարդում ենք.

«Բունն եմ ածել ես աշխարհի, լուկ վազեցի հետ շատ շահի.

Զինչ Տէրն երես հեքիք չածի, ա՛յլ մեծութեան սիրտ ունէի.

Ժողովեցի շատ մի բարի՝ բողակ արի զինք թաթարի»²:

Այս տողերից տեղեկանում ենք, որ Ֆրիկը իր ունեցած հարստությամբ չրավականանալով, մեծ շահի հետև է ընկել և իր ունեցվածքը մոնղոլ-թաթարներին «բողակ», այսինքն՝ պաշար է արել:

Մեծ շահի ու հարստության հետևից ընկնելու հետևանքով իր ունեցվածքից զրկվելու մասին Ֆրիկն ակնարկում է մի շարք տաղերում: Մեջ ենք բերում միայն մի քանի վկայություններ:

1. Նույն «Ողբանք փոշիմանութեան» տաղից («Դիվան», էջ 288—289).

«Այն բազային եմ նըմանի, որ փոքր որսի ոչ հաւանի,

Ով որ ածէ դաշքն այլ մեծի, բեստէ կենայ զօրն անօթի...

Զինչ մեծամեծ վաստակ արի՝ տանիլ տուի զինքն հեղեղի»:

2. «Եկայք, եր ի բաց թողունք» բառերով սկսվող տաղից («Դիվան», էջ 350).

«Զինչ մարմնոյդ ՚լ անծիդ համար դատեցար դու շատ մի տարիք,

Ամէնն ի յոշինչ դարձաւ, շահ չեղաւ, քան զէնն աւելիք:

(կամ՝ «Ամէնն ի քամին՝ զընաց և ի քուն կացեր դու հերիք»):

3. «Տաղ վասն բարեգործութեան մարդկան» տաղից («Դիվան», էջ 360).

«Ֆրիկ, ցանկացար դու խիստ մեծութեան՝ քեզ ո՞վ կամի տալ,

Ածնիկ ես այդոր, զինչ որ քաշեցիր ու դեռ կամի դալ:

Խարէութենէ եղաւ ՚լ ի մեղաց, տրիմար մի կենալ,

Թէ այդ քեզ չեղաւ խրրատ, մեծ վընասն յետև կամի դալ»:

¹ Դիվան, ԽԶ, 10—11 (էջ 182): Հմմտ. Բանաստեղծ., XXX, 11—17 (էջ 171):

² Դիվան, Լ, 8—10 (էջ 288): Հմմտ. Բանաստեղծ., Կ, 13—18 (էջ 25):

4. «Ողբանք ի վերալ գալստեան և ձախելոյ» տաղից («Դիվան», էջ 402).

«Նրմանեցար արծուին ու ի յօգն ելար շրփացար,
Ասցեր՝ թէ շատ մի դեկան զուգեմ, լինիմ կամս ի կատար...
Ֆրրիկ, զայդ ո՞ւմ գանդատիս, քո գիշուդ՝ պատճառ դու եղար»:

5. Նույն տաղի մի այլ տարբերակից («Դիվան», էջ 404).

«Ֆրրիկ, վրզօքդ և ձեռքդ, ոսօքդ ընկեր ես ի չար
Ունիր քո շափ դու բարի, մեծութեան վասն է՞ր ցանկացար»:

Այսպիսով, պարզ է դառնում, որ Ֆրիկը սկզբում եղել է հարուստ, սակայն հետագայում, մեծ շահ ստանալու հույսով, մասասչիներից մեկի «օրթախը» (ընկերակիցը) դառնալով, սնանկացել է և թշվառ ու անօգնական դրություն հասել:

* * *

Ֆրիկի «Վասն Արղուն դանին և Բուղային» երկի մեջ հիշատակված պատմական անձնավորություններից շատերի ով և ինչ լինելը, ինչպես և մասասչիների հետ ունեցած նրանց կապը մինչև այժմ պարզված չէ, որոշ ուսումնասիրողներ նույնիսկ շփոթել են նույնանուն, բայց տարբեր անձնավորությունների խրար հետ և այլն: Նկատի ունենալով այդ, անհրաժեշտ ենք համարում նրանց մասին տալ համառոտ տեղեկություններ:

1289 թվականին Արղուն խանի դեմ կազմակերպված դավադրության ղեկավար Բուղան Մերձավոր Արևելք եկած մոնղոլական ամենաբազմամարդ ցեղերից մեկի՝ Ջելայիր կոչվող ցեղի առաջնորդն ու էմիրն էր: 1284 թվականին տեղի ունեցած զահակալական կռիվների ժամանակ Բուղան բացառիկ ծառայություն մատուցեց Արղուն խանին: Իր կողմը դրավելով էմիրների մեծ մասին, նա կոտորեց Քաղուդար-Ահմեդ խանին (1282—1284) ու նրա կողմակիցներին և բանտից ազատեց ու զահ բարձրացրեց Արղունին: Ի փոխհատուցումն այդ բացառիկ ծառայության, Արղուն խանը Բուղային շնորհեց «չինքսան» բարձր տիտղոսը և նրան դարձրեց իր պետության բոլոր գործերի կառավարիչ՝ կարգադրող ու ղորքի ղլխավոր հրամանատար: Ռաշիդեդդինը վկայում է, որ ամբողջ պետության մեջ ոչ մի հրաման և կարգադրություն, այդ թվում և Արղուն խանի հրամանները, չէին կատարվում առանց Բուղայի դիտության ու հավանության: Անշուշտ նրա կարգադրությամբ էր, որ մասասչիների ունեցած պարտամուրհակների դիմաց երկար տարիներ ի վեր ոչինչ չէր վճարվում: Ահա թե ինչու Ֆրիկը Բուղային համարում է մասասչիների և նրանց ընկերակիցների ղլխավոր շարակամը:

Բուղան 1289 թվականի սկզբին դավադրություն է կազմակերպում Արղունի դեմ, սակայն դավադրությունը մերկացվում է և նա նույն թվականի հունվարի 16-ին մահապատժի է ենթարկվում¹:

¹ Տե՛ս Рашид-ад-дин. т. III, էջ 92, 99, 101, 106—110, 114, 123, Ստեփաննոս Ռբլյան, «Պատմութիւն տանն Սիսական», էջ 430, «Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դարեր», հատ. I, Երևան, 1951, էջ 47—49:

Այս բանաստեղծության մեջ Բուզայի հետ երկու անգամ հիշատակված Արուստը ոչ այլ ոք է, եթե ոչ Բուզայի հարազատ եղբայրը, որը դավադրության ակտիվ մասնակիցներից մեկն էր և այդ ժամանակ հանդիսանում էր Բաղդադի և նրա մարդի կառավարիչը: Նա մահապատժի է ենթարկվել նույն թվականի փետրվարի 22-ին¹:

Մասասչինների կրած շարժարանքները նշելուց հետո Ֆրիկը գրում է.

«Ջալալեդդինն էր մընացել
Նա կու գարնէր ակցի բանին.
Տէրն սաստեց խոլոր աշօք,
Ու ցրրուեցաւ տունն ու բարին»²:

Ո՞վ էր այս Ջալալեդդինը, որ մասասչինների գործին քացի է տվել, և որի տունն ու ունեցվածքը ոչնչացվել է: :

Բանասեր Տիրայրը կարծել է, որ այստեղ հիշատակված Ջալալեդդինը՝ Խորեզմի սուլթան Ջալալեդդինն է (1220—1231), և որ Ֆրիկը իր այս տողերով իբր ակնարկել է նրա 1225 թվականին դեպի Հայաստան կատարած արշավանքը, ինչպես և հետագայում մոնղոլներից պարտվելը և սպանվելը³:

Իհարկե, այս եզրակացությունն անհիմն է. սուլթան Ջալալեդդինի ժամանակ նշանավոր տաղերգուն նույնիսկ չէր ծնվել: Այս Ջալալեդդինը Արդուն խանի լեզիր, մոնղոլական պետության սահիպ դիվան Ջալալեդդին Սեմանին է: Լինելով Բուզային մոտ կանգնած մարդկանցից մեկը, սա ևս կասկածվեց դավադրության մասնակցության մեջ, 1259 թվականի հունիսին հեռացվեց պաշտոնից, իսկ նույն թվականի օգոստոսի 7-ին մահապատժի ենթարկվեց⁴:

Սահիպ դիվան Ջալալեդդին Սեմանին, հանդիսանալով մոնղոլական պետության ֆինանսական բոլոր գործերի անմիջական պատասխանատուն և կարգադրողը, Բուզայի հետ միասին եղել է այն մարդկանցից մեկը, որը ամեն կերպ արգելքներ է հարուցել մասասչինների առաջ, չի վճարել նրանց մուրհակները, այլ խոսքով՝ քացի է տվել մասասչինների գործին:

Վերոհիշյալ քառատողից քիչ ցած Ֆրիկը գրում է.

«Այն անօրէն Թուման-Ճուխին,
Իսկի չածեր զԱսաուած ի միտ՝
Չունէր երկիւղ ի յիւր սըրտին:
Հանց խորտակէ Ասաուած ըզնա,
Որ իւր ազգովն ամէն ջընջին»⁵:

Բանասեր Տիրայրի կարծիքով Ֆրիկն այստեղ հիշատակել է մոնղոլական պետության հիմնադիր Տեմուլին-Չինգիզ խանին և նրա ազգին, այսինքն՝ մոն-

¹ Արուսի մասին տե՛ս Բաաւոժ-աժ-ժուհ, Դ. III, էջ 99, 101, 102, 104, 108, 110, 113, 115, 117, 119—121, «Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դարեր», հատ. I, էջ 47—49:

² Դիվան, I, 74—77 (էջ 424): Հմմտ. Բանաստեղծ., XXXVIII, 71—74 (էջ 211):

³ Դիվան, Քննական ուսումնասիրություններ, էջ 72—73:

⁴ Ջալալեդդին Սեմանինի մասին տե՛ս Բաաւոժ-աժ-ժուհ, Դ. III, էջ 122—123: «Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դարեր», էջ 49:

⁵ Դիվան, I, 85—89 (էջ 424—425): Հմմտ. Բանաստեղծ., XXXVIII, 82—86 (էջ 211—212):

դուլ-թաթարներին¹։ Սա հիմնադրուկ և մտացածին մի ենթադրություն է միայն։ «Թուման» ալստեղ հատուկ անուն չէ, այլ ճոխիի գինվորական տիտղոսը։ «Թուման-Ճուխի» նշանակում է «բյուրապետ Ճուխի»։

Ժամանակակից սկզբնաղբյուրները «Ճուխի» անունով ոչ մի մոնղոլ էմիր չեն հիշատակում։ Կարծում ենք, որ «Թուման-Ճուխին» ոչ այլ ոք է, եթե ոչ Ռաշիդեդդինի մոտ հաճախ հիշատակված էմիր Չուշին կամ Ճուշին, որը թե՛ դավադրությունից առաջ և թե՛ նրանից հետո Արղուն խանի նշանավոր էմիրներից մեկն էր և ղեկավարում էր մոնղոլական պետության դատական գործը²։ Անկասկած է, որ տաղի բնադրում եղել է «Թուման-Ճուշի»։ Հետագա ընդօրինակողներից մեկը «շ» տառը շփոթելով «ղ»-ի հետ՝ այն դարձրել է Թուման Ճուհի», իսկ մի երկրորդ արտադրող՝ «Թուման Ճուխի»։

Ռաշիդեդդինը վկայում է, որ մոնղոլ էմիրների, «մասասի» գործին վերահսկող նախիպների, բիթիքչիների և մասասչիների միջև շատ հաճախ վեճեր ու կռիվներ էին առաջանում։ Որպես դատական գործերի ղեկավար էմիր Չուշին բնականաբար մասնակցում էր մասասչիների հետ կապված վեճերի քննությանը և վճռում նրանց հասանելիք գումարների չափը։ Ռաշիդեդդինի վկայության համաձայն, էմիր Չուշին սպանվել է 1291 թվականին։

Մեջ բերված հատվածից անմիջապես հետո Ֆրիկը հիշատակում է նաև «Տիրասպան, Աստուածուրաց, լիրբ՝ և անամոթ այն շուն Սոֆին»։ Դժբախտաբար տաղերգուն, նրա իսկական անունը չհայտնելով, հնարավորություն չի տալիս պարզելու, թե ում է նկատի ունեցել։ Սակայն կարելի է պնդել, որ այդ Սոֆին պաշտոնից հեռացված բարձրաստիճան մի պարսիկ պաշտոնյա է եղել, որը կասկածվել է դավադրությանը մասնակցելու մեջ։ Անշուշտ նա նույնպես կապ է ունեցել մասասչիների գործի հետ։

Բուդայի և նրա կողմնակիցների սպանությունը և նրանց փոխարեն պետական բարձր պաշտոններում նոր մարդկանց նշանակումը, բնական է, որ որոշ հույսեր պետք է արթնացնեին մասասչիների միջավայրում։ Սակայն դավադրության ճնշումից արդեն անցել էր վեց ամիս, բայց դեռևս ոչ մի լուր չկար պարտամուրհակների դիմաց դրամ վճարելու կարողություն մասին։ Ահա այս հանգամանքը նկատի ունենալով է, որ Ֆրիկը գրում է.

«Կու հրամայէ հոգցող անուն
Թաշար, Ղուշան, Սազադօրին.
Թէ՛ «Շուտ հոգցէք զհրեանց բաներդ,
Թէ չէ ի հետ ձեզ պարապին»։
Անէծքրն չէ ոչում բարի,
Շուտ կու բռնէ դադամորդին»³։

Նախ նկատենք, որ Ֆրիկի «Դիվանի» հրատարակողը ձեռագրում միանգամայն ճիշտ գրված «Ղուշան» անունը «ուղղել» և դարձրել է «Ղաղան», ցանկա-

¹ Դիվան, Քննական ուսումնասիրություն, էջ 71։

² Չուշիի մասին տե՛ս Рашид-ад-дин, т. III, էջ 95, 99, 102, 104, 118, 119, 124, 127։ Սահիփանուս Օրբելյանը սրան նշում է Չիշու ձևով, էջ 408։

³ Դիվան, ԼԵ, 156 — 161 (էջ 427)։ Հմտ. Բանաստեղծ., XXXVIII, 153 — 158, (էջ 214)։

նալով այդ անվան մեջ տեսնել Արղուն խանի որդի Ղազանին, որը սխալ է և անընդունելի¹:

Բերված հատվածի իմաստը այս է, աստված հրամայում է հոգեղներին, այսինքն պետության ղործերը կառավարողներին ու կարգադրողներին՝ Թաշարին, Ղուչանին և Սաղադոլին, թե շուտ հոգացե՛ք ձեր գործերի, ձեր կատարելիքի մասին, այսինքն՝ թե շուտ կարգադրություն արե՛ք պարտամուրհակների վճարման մասին, եթե ոչ մասաչիները և նրանց ընկերակիցները այս անգամ կսկսեն ձեզ անեծքներ տալ, իսկ անեծքը ոչ ոքի համար լավ չէ և մարդուն շուտ է բռնում:

Ուվքե՛ր են այստեղ հիշատակված «հոգեղներ» Թաշարը, Ղուչանը և Սաղադոլին:

Ա. Հովհաննիսյանը սխալմամբ կարծել է, որ Թաշարը և Ղուչանը Բուղայի գործակիցներն են եղել²: Թաշարը Ռաշիդեղդինի մոտ և մյուս սկզբնաղբյուրներում հաճախ հիշատակվող էմիր Թաղաշարն է, որը ժողովրդական ձևով անվանվում էր նաև «Թաշար»: Սա Արղուն խանի ամենահավատարիմ ավագ էմիրներից մեկն էր, որը ակտիվ մասնակցություն էր ունեցել Բուղայի դավադրության ճնշման գործում³: Արղուն խանի ավագ էմիրներից էր նաև Ղուչանը, որը ըստ Ռաշիդեղդինի, Բուղայի դավադրությունից հետո նշանակվում է մոնղոլական պետության մալաքաղաք Թավրիզի և նրա մարզի կառավարիչ⁴, իսկ ըստ Ստ. Օրբելյանի՝ «էր դանձապէտ արքայի»⁵:

Ֆրիկի այս վկայությունից պարզ երևում է, որ Բուղայից հետո Թաշարը և Ղուչանը պետական բարձր պաշտոններ են ստացել և սրանցից են առաջին հերթին ականակել մասաչիները իրենց պարտամուրհակների վճարումը:

Վերոհիշյալ պաշտոնյաներից երրորդը՝ «Սաղադոլին» է, այսինքն՝ սահիպ դիվան Սաղադոլին: Սա ծագումով հրեա էր և մասնագիտությամբ բժիշկ, սակայն շատ լավ հասկանում էր նաև ֆինանսական գործերից: 1289 թվականի հունիսին պաշտոնից հեռացված Զալալեղդին Սեմանիի փոխարեն, Սաղադոլին նշանակվեց վեղիր ու սահիպ դիվան և պետական այդ բարձր պաշտոնում մնաց մինչև 1291 թվականի սկիզբը, այսինքն՝ մինչև մահապատիժի ենթարկվեց մոնղոլ էմիրների հրամանով⁶:

«Վասն Արղուն դանին և Բուղային» բանքի առաջին մասում հիշատակված Սուլթան-աղան, որին Ռաշիդեղդինը հաճախ անվանում է նաև Սուլթան-էուղեչի, մոնղոլ նշանավոր էմիրներից մեկն էր և Բուղայի անձնական թշնամին: Սա առաջինն էր, որ հայտնաբերեց Բուղայի դավադրությունը և ձերբակալեց նրան⁷:

¹ Դիվան, Գննական ուսումնասիրություն, էջ 76—77:

² Ա. Հովհաննիսյան, նշված աշխատությունը, էջ 30:

³ Թաղաշարի մասին տե՛ս Բալադ-ադ-ժուհ, Գ. III, էջ 95, 97, 99, 102, 104, 111, 119—120, 123—125 և այլն, Ստ. Օրբելյան, էջ 471:

⁴ Ղուչանի մասին տե՛ս Բալադ-ադ-ժուհ, Գ. III, էջ 118, 124, 126—127:

⁵ Ստ. Օրբելյան, էջ 468:

⁶ Սաղադոլինի մասին տե՛ս Բալադ-ադ-ժուհ, Գ. III, էջ 118—128, Ստ. Օրբելյան, էջ 468:

⁷ Սուլթան-էուղեչիի մասին տե՛ս Բալադ-ադ-ժուհ, Գ. III, էջ 119, 121, 127, 183—184:

Ուշագրավ է, որ բացի Ջալալեդդին Սեմանի և Սա'դադդովլե սահիպ դիվաններից, Ֆրիկը իր «Քնդդէմ ֆալաքին» տաղում հիշատակում է մի երրորդ սահիպ դիվանի ևս:

«Սահիպ Դիւանին ասենք, որ մըլքեց դերկիր նա բոլոր,
Հանցեղ սիւսաթ ունէր, որ շունէր ոչ ոք թաղաւոր:
Զինչ որ խանորայք կային՝ յափն ունէր զինչ ըզմի խընծոր,
Ֆալաքն երբ ի սիրտ ելաւ, նա՛յ, արար զինքն երկու կըտոր»¹:

Ո՞վ է այս Սահիպ Դիվանը, որը մի քանի խաների ժամանակ պետական այգ բարձր պաշտոնն է վարել: Այդպիսին ժամանակակից սկզբնաղբյուրներից Նալտնի է միայն մեկը՝ Շեմսեդդին Մուհամմեդ Զուվեյնին, որը սահիպ դիվան է եղել Հուլավու (1256—1265), Աբաղա և Թագուղար-Ահմեդ խաների ժամանակ: Հայկական սկզբնաղբյուրները սրան իր պաշտոնի անունով սովորաբար անվանում են Սահիպ Դիվան:

Սահիպ դիվան Շեմսեդդին Մուհամմեդ Զուվեյնին ծագումով պարսիկ էր: Նրա եղբայրն էր պարսիկ նշանավոր պատմիչ Ալանդդին Աթա-Մելիք Զուվեյնին: Ժամանակակից պատմիչները Շեմսեդդին Մուհամմեդ Զուվեյնուն մեծարում են «գիտուն», «ամենազոր», «բազմահնար», «երջանիկ» մակդիրներով: Նա օգտագործելով իր բարձր պաշտոնը, պետական միջոցների մեծ շարաշահումներ է կատարում և պետության տարբեր մասերում դնում կամ այլ միջոցներով ձեռք է բերում ընդարձակ կալվածքներ: Նրա տարեկան եկամուտը կազմում էր 365 թումանի մի ահեբի գումար, որը հավասար էր էլխանության տարեկան եկամուտի 20 տոկոսին: Նա խոշոր կալվածքներ ուներ նաև Հայաստանում: Նրան էին պատկանում Անին, Կարսը, իսկ 1269 թվականին աթաբեկ Ավադի միակ ժառանգորդուհուն՝ Խոշաքի հետ ամուսնանալուց հետո, նրան են անցնում նաև Զաքարյան Իվանե-Ավադյան նշանավոր ֆեոդալական տան ընդարձակ կալվածքները²:

Շեմսեդդին Մուհամմեդ Զուվեյնին, լինելով սահիպ դիվան, ինչպես արդեն տեսանք Ռաշիդեդդինի 26-րդ պատմվածքից, սերտ առնչություն ուներ մասասւշինների հետ և նրանց կեղծ պարտամուրհակների հաշվին պետական խոշոր գումարներ էր յուրացրել³:

Իր ժամանակի երեք սահիպ դիվաններին հիշատակելու փաստն ինքնին ցույց է տալիս, որ Ֆրիկը ոչ միայն լավ ծանոթ էր նրանց գործունեությանը, այլև սերտ առնչություն է ունեցել մոնղոլական սլետության ֆինանսական-հարկային գրասենյակի՝ «դիվանի» հետ: Այդ առնչությունը, ինչպես տեսանք, պայմանավորված էր մասասւշիններից մեկի հետ ունեցած նրա ընկերակցությամբ:

* * *

Ֆրիկի առանձին տաղերի դրույթյան ժամանակը և նրա ստեղծագործության առանձին շրջանների որոշումը շատ կարևոր նշանակություն ունի

¹ Դիվան, ԻԷ, 31—34 (էջ 374—375): Հմմտ. Բանաստեղծ, XXXIX, 50—57 (էջ 219):

² Սահիպ դիվան Շեմսեդդին Մուհամմեդի մասին մանրամասն տեղեկություններ տալիս է Ռաշիդեդդինի 13-րդ գլխի երկու արձանագրության մասին, Երևանի Պետ. համալսարանի գիտական աշխատություններ, հատ. 47, 1955, էջ 89—114:

³ Рашид-ад-Дин, т. III, էջ 285—289:

տաղասացի այս կամ այն տաղի բովանդակությունը, այնտեղ արտահայտված տրամադրություններն ու մտքերը լավ հասկանալու տեսակետից: Դա անհրաժեշտ է նաև նրա համար, որ Ֆրիկի երկերի երկու հրատարակություններում էլ խիստ կերպով խախտված են նրա տաղերի ժամանակագրական հաջորդականությունը: «Առանց ժամանակագրական ուղեցույցի, — իրավացի կերպով նշում է Ա. Հովհաննիսյանը, — ընթերցողը կարող է մոլորվել առկա նյութերի լրավորներում»¹:

Բանասեր Տիրայրը, թե 1918 թվականին գրած իր հոդվածում և թե Ֆրիկի «Դիվանին» կցած իր ուսումնասիրության մեջ, անուշադիր կերպով ուսումնասիրելով իր իսկ օգտագործած սկզբնաղբյուրները, կարծել է, թե «Վասն Արդուն դանին և Բուղային» ստեղծագործության պատմական հիմքը Թագուղար-Ահմեդ խանի և Արդուն խանի միջև 1284 թվականին մղված զահակալական կռիվներն են եղել: Ելակետ ունենալով այս սխալ ենթադրությունը, բանասեր Տիրայրը կարծել է, թե Ֆրիկը սխալ է նկարագրել պատմական դեպքը, շփոթել է գործող դեմքերին, ուրիշների կազմակերպած ղավադրությունը վերադրել է Բուղային և նրա կողմնակիցներին: «Ղուլան»-ը, «Ղազան» դարձնելու իր իսկ կատարած սխալի վրա հենվելով, նա մի այլ տեղ գտնում է, թե իբր այս բանաստեղծության մեջ արտացոլվել են նաև 1291 թվականի դեպքերը²:

Ֆրիկին ուղղված այս մեղադրանքները հիմնավորել են և սխալ: Այս բանաստեղծության և ժամանակակից սկզբնաղբյուրների համեմատությունը ցույց է տալիս, որ այստեղ բանաստեղծը, իբրև ականատես և ժամանակակից, պատմում է 1289 թվականի սկզբին Արդուն խանի դեմ Բուղայի կազմակերպած զավադրության, նրա մերկացման, Բուղայի և նրա կողմնակիցների ջախջախման իրողությունները: Այս բանաստեղծության մեջ ամենափոքր ականարկ անգամ չկա ոչ 1284 և ոչ էլ 1291 թվականների դեպքերի մասին:

Նախորդ ուսումնասիրողները արդեն ցույց են տվել, որ Ֆրիկի այս բանաստեղծությունը գրված է 1289 թվականին՝ Բուղայի կազմակերպած զավադրության ջախջախման անմիջական ազդեցության տակ: Այս բանաստեղծության մեջ սահիպ դիվան Ջալալեդդին Սեմանուն նվիրված քառատողը մեզ հնարավորություն է տալիս ոչ միայն հաստատուն ու վերջնականապես պարզելու այս տաղի գրության ճիշտ տարեթիվը, այլև ամիսը: Ինչպես արդեն նշել ենք, Ջալալեդդին Սեմանին սահիպ դիվանի պաշտոնից հեռացվել է 1289 թվականի հունիսին, իսկ մահապատժի է ենթարկվել նույն թվականի օգոստոսի 7-ին: Քանի որ մեր տաղասացը իր քառատողում տեղյակ է Ջալալեդդինի պաշտոնից հեռացվելու, նրա ունեցվածքը գրավելու մասին, բայց լուր չունի նրա մահապատժի մասին, ուստի այստեղից պարզ հետևում է, որ Ֆրիկը իր այս տաղը գրել է 1289 թվականի հունիս-հուլիս ամիսներին:

Հիմք ընդունելով «Էնղեմ ֆալաքին» տաղի այն հատվածը, որտեղ հիշատակված է սահիպ դիվան Շեմսեդդին Մուհամմեդի վախճանը, ինչպես և հենվելով սրա մահվան թվականի մասին Ստեփաննոս Օրբելյանի հաղորդած տեղեկության վրա, Մ. Մկրյանը դրել է, որ այս տաղը գրված է 1286 թվականից ոչ շուտ³:

¹ Ա. Հովհաննիսյան, *նշված աշխատությունը*, էջ 86:

² Դիվան, *Բնական ուսումնասիրություն*, էջ 37—62, 74—78:

³ Մ. Մկրյան, *տե՛ս Ֆրիկի Բանաստեղծությունների առաջարանը*, էջ 6:

Մ. Արեղյանը նույն հիմունքներով առարկելով Մ. Մկրյանին, գտել է, որ այս տաղը գրված է ոչ թե 1286 թվականից ոչ շուտ, այլ հենց 1286 թվականին՝ Սահիպ Դիվանի մահապատժի անմիջական ազդեցության տակ¹:

Ռաշիդեղդինի վկայության վրա հենվելով և ճիշտ կերպով նշելով, որ Սահիպ Դիվանի մահապատժի տեղի է ունեցել ոչ թե 1286 թվականին, այլ 1284 թվականի հոկտեմբերի 16-ին, Ա. Հովհաննիսյանը առարկելով Մ. Արեղյանին, դատում է, որ «Ընդդէմ ֆալաքին» տաղը չէր կարող գրված լինել 1291 թվականից վաղ, և կարծում է, որ այն հավանաբար գրված պետք է լինի 1295—1298 թվականներին: «1284 կամ թեկուզ 1286 թվականին,— դրում է Ա. Հովհաննիսյանը,— Ֆրիկը չէր կարող այնքան հուսախաբված լինել թաթարներից, ինչպես ականերն է այդ բանքից: Այդ տարիներին թագավորում էր «աստուածադիր» Արդունը, որի մասին չէր կարող ասել, թե «դողերն եզիր մեծաւոր» կամ որ «ֆալաքը» պիտի վարեն ու ձգեն նրան, չհամարելով «ոք թագաւոր», քանի որ, անդամ 1289 թվականին նա ուներ այն հայացքը, թե՝

«Ով կուռն տալ թագաւորաց՝
Իւրն բերէ կործանութիւն»:

Այնուհետև հարգելի գիտնականը ենթադրում է, որ Արդուն խանի բռնի վախճանը և Քելյաթու խանի (1291—1295) սպանությունը «առիթ տվեցին Ֆրիկին ասելու, թե ֆալաքը դարձում և ձգում է անդամ էլխաններին, չհամարելով «ոք թագաւոր»: Գտնելով «Գանգատ» և «Ընդդէմ ֆալաքին» տաղերի միջև տրամադրությունների և հայացքների մերձավորություն, Ա. Հովհաննիսյանը ենթադրում է, որ այդ ստեղծագործությունները գրվել են մոտ ժամանակներում²:

«Ընդդէմ ֆալաքին» տաղի դրության տարեթվի ճշտումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն Ֆրիկի ստեղծագործության ժամանակագրության, այլև նրա ծննդյան մոտավոր տարեթվի որոշելու համար:

Ոչ միայն «Ընդդէմ ֆալաքին» և «Գանգատ», այլև «Վասն գալեհի և լրջի» նշանավոր տաղերն իրար հետ զաղափարական սերտ կապի մեջ են գտնվում և փաստորեն մեկը մյուսի զարգացումն են հանդիսանում: Սակայն, դժբախտաբար անվանի տաղասացը այս երեք տաղերում էլ իր անունը չի հիշատակել, ինչպես այդ արել է իր մյուս տաղերում: Այս փաստը հիմք ծառայեցնելով, Ֆրիկի «Դիվանը» կազմող բանասեր Տիրայրը սխալ և անհիմն կերպով գտել է, որ «Գանգատը»-ը Ֆրիկին չի պատկանում: Ճիշտ է, մինչև այժմ ոչ ոք կասկած չի հայտնել «Ընդդէմ ֆալաքին» և «Վասն գալեհի և լրջի» բանքերի հեղինակային պատկանելիության շուրջը, բայց վաղը կարող են ալ ուսումնասիրողներ գտնվել, որոնք, նույն հիմքով կարող են պնդել թե այս տաղերը ևս Ֆրիկին չեն: Այս տաղերը անտարակույս Ֆրիկինն են, սակայն հարցի անառարկելի լուծման տեսակետից շատ կարևոր է ցույց տալ նշված երեք տաղերից դոնե մեկի սերտ կապը մեր հեղինակի այնպիսի մի ստեղծագործության հետ, որի մեջ նա հիշատակել է իր անունը:

Առաջին հայացքից որքան էլ հավանական և հիմնավոր թվան «Ընդդէմ ֆալաքին» բանքի դրության ժամանակը որոշելու համար Ա. Հովհաննիսյանի

¹ Ս. Արեղյան. Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2-րդ, էջ 542—543:

² Ա. Հովհաննիսյան. Նշված աշխատությունը, էջ 87—91:

րերած փաստարկումները, այնուամենայնիվ մենք գտնում ենք, որ դրանք հիմնավորված չեն:

Այս տաղի գրության շարժառիթները և թվականը մեզ համար բացահայտվում է այն դեպքում, երբ մենք մի կողմից նկատի ենք ունենում Թագուղար-Ահմեդի և Արղունի միջև 1284 թվականին մղված դաժակալական կռիվներն ու հարակից դեպքերը, իսկ մյուս կողմից՝ երբ այս տաղի առանձին մասերը ուշապիր կերպով համեմատում ենք «Վասն Արղուն զանին և Բուղային» բանքի հետ:

Նախ, համառոտակի վերհիշենք 1284 թվականի դեպքերը: Աբաղա խանի մահվանից հետո, Սահիպ Դիվանի և այլոց օժանդակությամբ, 1282 թվականին զահ է բարձրանում Աբաղայի եղբայր Թագուղարը, որը մահմեդականություն ընդունելով՝ իրեն վերանվանում է Ահմեդ: Գահաժառանգ Արղունը ստիպված է լինում ամրանալ Խորասանում: 1284 թվականի առաջը մոնղոլներից, պարսիկներից, թուրքերից, հայերից և վրացիներից կազմված 180 հազարանոց ընտիր զորքով Թագուղար-Ահմեդը հարձակվում է Արղունի վրա: Արղունը պարտվում, ձերբակալվում և բանտարկվում է: Ըստ Ռաշիդեդդինի վկայության, չորս օր հետո մոնղոլական զորքի և էմիրների մեծ մասը, Բուղայի գլխավորությամբ, անցնում են Արղունի կողմը, նրան ազատում են բանտից, ապա գլխատում են Թագուղար-Ահմեդին, կոտորում նրա կողմնակիցներին և խան հռչակում Արղունին¹:

Ձերբակալված և մահադատվող ենթակա Արղունի հանկարծակի զահ բարձրալար և զահակալող Թագուղար-Ահմեդի նույնքան հանկարծակի զահից գլորվելն ու գլխատվելը, այսինքն՝ հակաբեռնեցում գտնվող հակառակորդների տեղերի հանկարծակի փոփոխությունը միջնադարյան բանաստեղծի վրա խորը ազդեցություն պետք է թողներ և առիթ պետք է տար նրան ասելու, թե ֆալաքը «Ջարնու և ձրգե ի վայր՝ չհամարէ զոչ ոք թագաւոր»:

Լսենք Ֆրիկին, որը խոսքն ուղղելով բախտի անիվին, գրում է.

«Ձով կու սիրես այսօր, կու դրնես ի յոսկի աթոռ,
Վաղին երբ ձրգես յաշաց՝ հաւարես հողոյն մոխրաւոր:
Յորժամ որ ի յետ քակիս ու ձրգես ի յաշքդ խոլոր,
Ո՛չ թուղթ, ո՛չ զալամ օգնէ, ՚ն ոչ հարիւր հազար ձիաւոր:
Տաս ի վիզն ՚ն ի վայր ձրգես, չի մրռես զոչ ոք թագաւոր,
Հընցգուն քար ափով ածես, որ չօգնէ հազար ումբաւոր»²:

Անկասկած է, որ այս տողերում մեր բանաստեղծը ոչ թե նկատի է ունեցել Արղունի կամ Քեյդաթուի, այլ Թագուղար-Ահմեդի վախճանը, որին իսկապես չէին օգնել ոչ հարյուր հազարավոր ձիավորները և ոչ էլ հազարավոր ումբավորները, ինչպես նաև Սահիպ Դիվանի խելքն ու «բաղմահնար» մեքենայությունները:

Որ իսկապես այս տաղում խոսքը վերաբերում է Թագուղար-Ահմեդի վախճանին և Արղունի զահ բարձրանալուն՝ ավելի պարզ երևում է ներքոհիշյալ տողերից:

¹ Թագուղար-Ահմեդի և Արղունի միջև մղված կռիվների և հարակից դեպքերի մասին տե՛ս Рашид-ад-дин, т. III, էջ 103—111: Ստեփաննոս Սրբեյան, էջ 426: «Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դարեր», էջ 45—47:

² Դիվան, Խէ, 25—30 (էջ 373—374): Հմմտ. Բանաստեղծ., XXXIX, 38—49 (էջ 218—219):

«Հիմիկ դրժարեց բաներս, որ թաթարն եղաւ թագաւոր.
Զըրկեց զամենայն աշխարհս ու գողերն եղիր մեծաւոր»¹:

Ինչու Ֆրիկը ասում է, թե՝ «Հիմիկ դրժարեց բաներս, որ թաթարն եղաւ թագաւոր»: Չէ՞ որ նա իր ողջ կյանքում գտնվել է միայն թաթար խաների տիրապետության տակ: Այստեղ գործածված «Հիմիկ» բառի իմաստը մեզ պարզ կլինի, եթե այս տաղը գրված լիներ մոնղոլական տիրապետության սկզբում կամ թե Ֆրիկի ապրած ժամանակաշրջանում մի որևէ թաթար խան փոխարինած լիներ ծագումով ոչ թաթար խանի: Սակայն մեր բանաստեղծը պատմական նման դեպքերի ականատես չի եղել: Այս երկտողի զաղտնիքը մեզ համար պարզ կդառնա, եթե նկատի առնենք հետևյալը: Ֆրիկի ժամանակակից մուսուլման պատմիչները, ի տարբերություն կռապաշտ հեթանոս-թաթար խաների, Թադուղար-Ահմեդին անվանում էին «Իսլամի վեհապետ» կամ «Իսլամի թագավոր», որովհետև նա մոնղոլ խաներից առաջինն էր, որ ընդունեց մահմեդականությունը: Սիջնադարում այս կամ այն մարդու կրոնի և ազգության նույնացումը շատ սովորական ու տարածված երևույթ էր ամենուրեք: Այսպես օրինակ, հունադավան հայերին կոչում էին «հոռոմ», իսկ կաթոլիկներին՝ «ֆռանգ»: Այս բացատրությունից հետո պարզ է, որ Ֆրիկը ևս այս երկտողում պարզապես ուզում է ասել, թե հիմա դժվարացան մեր գործերը, երբ որ «Իսլամի թագավոր» կամ մահմեդական Թադուղար-Ահմեդին փոխարինեց կռապաշտ, հեթանոս Արդունը: Այստեղ «թաթար» բառը գործածված է ոչ թե որպես ազգությունից, այլ որպես սխալմամբ կարծել են բոլոր ուսումնասիրողները, այլ, վերոհիշյալ օրինակների նման, որպես դավանանք—կրոնը: Որ այս տողերը բացի Արդուն խանից այլ թաթար խանի չեն կարող վերաբերել, պարզ է, քանի որ միայն նա էր փոխարինել մահմեդական խանի:

Ովքե՞ր են այստեղ նշված գողերը, որոնց «թաթար թագավորը», այսինքն՝ Արդուն խանը «մեծաւոր» է նշանակել: Եթե նկատի ունենանք «Վասն Արդուն զանին և Բուղային» բանքը և ժամանակակից պատմիչների վկայությունները, ապա պարզ կդառնա, որ տաղասացը այստեղ ընդհանրացման ենթարկված ձևով կրկին ակնարկում է մասասչիների և նրանց «օրթախների» գլխավոր շարակամ Բուղային ու նրա գործակիցներին: Որ իսկապես Բուղան և նրա եղբայրը՝ Արուխը Արդունի գահակալության սկզբից սկսել են պետական մեծ միջոցների չարաշահումներ կատարել, երևում է ժամանակակից պատմիչների վկայություններից: Արար պատմիչ Արուլ-Ֆարաջը վկայում է, որ նրանք պետական գործերը վարում էին անփութությամբ և իրենք զբաղված էին հարստություն, գանձ, ձիեր, ոսկի և արծաթ զիզելով²:

Ֆրիկը, իր հանձարեղորեն ընդհանրացրած ներքոհիշյալ բացասական տիպերի մեջ, անկասկած, կրկին Բուղային նկատի ունի, երբ խոսքն ուղղելով ֆալաքին գրում է.

«Թէ չէ դու ի նայ հայեաց, որ չունի հունար հոգևոր,
Կայ նա ի յոսկոյ միջին, շրփացել դինչ ըզթագաւոր»³:

¹ Գիվան, Իէ, 19—20 (ԼՂ 373): Հմմտ. Բանաստեղծ., XXXIX, 26—29 (ԼՂ 217):

² Արուլ-Ֆարաջի այս վկայությունը տե՛ս Ֆրիկի «Գիվանի» Գնական ուսումնասիրություն մասում, ԼՂ 59:

³ Գիվան, Իէ, 41—42 (ԼՂ 375): Հմմտ. Բանաստեղծ., XXXIX, 73—74 (ԼՂ 220):

Կամ՝

«Ջանգէտ և զնաքաս մարդն յաստընտրս առնես ձեռնաւոր»¹:

Եվ իսկապես այս ժամանակ բացի Բուղայից ո՞վ կարող էր լինել շփացած «ղինչ ըղթագաւոր»: Այս տողերի հետ որքան համահնչյուն են Ֆրիկի 1289 թվականին Բուղայի մասին գրած ներքոհիշյալ տողերը:

«Դու բան զԱրդունն չիր պակաս,
Ի քո յահէն խիստ կու վախին»²:

Կամ ո՞վ էր այն «նաքաս», այսինքն ժլատ, ագահ, տմարդի ու անարդ մարդը, որ «ձեռնաւոր», այսինքն իշխանավոր, գլխավոր էր դարձել: Դարձյալ անկասկած է, որ դա Բուղան էր:

«Հիմիկ զըժարեց բաներս» էամ «Զըրկեց զամենայն աշխարհս» ասելով, բանաստեղծը ոչ միայն նկատի ունի ժողովրդի ծանր վիճակը, նրա զրկանքը, այլև իր և իր նման «օրթախնների» և մոնղոլական բանակին իրապես մեծ դուժմարների հասնող սպառազինություն մատակարարած մասասչինների դառն վիճակը: Ֆրիկի այս տողերից և Ռաշիդեդդինի վկայություններից դժվար չէ հետևել, որ մասասչինները իրենց ունեցած պարտամուրհակների դիմաց բուխրովին ոչինչ չեն ստացել Բուղայի կարգադրությամբ, նրա կառավարչության սկզբից:

Մեր կատարած դիտողություններից հետո ինքնին պարզ է դառնում, որ այս բանքում սահիպ զիվան Շեմսեդդին Մուհամմեդին նվիրված հատվածը գրված է նրա մահապատժի ազդեցության տակ: Ա. Հովհաննիսյանը տալը գրված համարելով 1295—1298 թթ. չի բացատրում, թե ինչու Ֆրիկը Սահիպ Դիվանի անկմանը անդրադարձել է նրա մահապատժից 11—14 տարի հետո միայն: Անշուշտ, Ա. Հովհաննիսյանին հայտնի է, որ Շեմսեդդին Մուհամմեդի մահապատժից հետո նրան հաջորդել էին չորս սահիպ-զիվաններ և բոլորն էլ նույն վախճանն էին ունեցել, այսինքն՝ իրենց կյանքը վերջացրել էին կառավարանում: Եթե իրոք այս տաղը գրված է 1295—1298 թվականներին, այն ժամանակ ինչու՞ Ֆրիկն իր բանքում չի հիշատակել նաև սրանցից որևէ մեկին, թեև ուղի ասենք «Վասն Արդուն դանին և Բուղային» բանքում հիշատակված Ջալալեդդին Սեմանի և Սադադդովլե սահիպ զիվաններին: Պատասխանը կարծում ենք պարզ է. որովհետև այս տաղը ոչ թե 1295—1298 թվականներին է գրված, այլ դրանից տարիներ առաջ:

Ինչ վերաբերում է Ա. Հովհաննիսյանի այն դիտողությանը, թե թագավորների վրա ձեռք բարձրացնելու հարցում Ֆրիկի այս և նրա 1289 թվականին գրած «Վասն Արդուն դանին և Բուղային» բանքերի միջև հակասություն գոյություն ունի՝ կարծում ենք, որ դա լուկ թյուրիմացության արդյունք է: Հարգելի դիտնականը ուշադրություն չի դարձրել այն հանգամանքի վրա, որ եթե մի դեպքում խոսքը վերաբերում է աստծո կողմից գործող ֆալաքի գործունեությանը, ապա երկրորդ դեպքում աչն վերաբերում է սովորական մարդու կողմից թագավորների վրա ձեռք բարձրացնելուն:

¹ Դիվան, Իե, 17 (էջ 373): Հմմտ. Բանաստեղծ., 22—23 (էջ 217):

² Դիվան, Լե, 26—27 (էջ 422): Հմմտ. Բանաստեղծ., XXXVIII, 25—26 (էջ 210):

Հիմնավոր չէ Ա. Հովհաննիսյանի այն պատճառարանությունը, ըստ որի 1284 կամ 1286 թվականին Ֆրիկը «աստվածադիր» Արղունին չէր կարող ասել, թե «դողերն եղիր մեծավոր»: Անկախ արար պատմիչ Արուս-Պարաջի վկայությունից ինքը՝ Ա. Հովհաննիսյանը Ֆրիկի «Վասն Արղուն դանին և Բուղային» բանքի ուղղաների հիման վրա եկել է այն եզրակացության, որ Բուղան Երկրի և Ժողովրդի վատթարագույն թշնամիներից մեկն էր: Մի՞թե Ֆրիկն իրավունք չունեիր Արղունին ասել թե «դողերն եղիր մեծավոր», երբ նա Երկրի և Ժողովրդի վատթարագույն թշնամուն, ուրիշներին զրկող և ինքը հարստացող, շատերին անմեղ տեղը կոտորող Բուղային նշանակել էր պետական բոլոր գործերի կառավարիչ-կարգադրող: Հիմնավոր չէ նաև Ա. Հովհաննիսյանի այն պնդումը, ըստ որի 1284 կամ 1286 թվականին Ֆրիկը չէր կարող այնքան էլ հուսախաբված լինել թաթարներից: Եթե իրոք Ֆրիկն այնքան էլ հուսախաբված չէր թաթարներից, ապա ինչու՞ նա ասում էր՝ «ճգը չի կայ, հուն չերեին, ցաւս երկարեց և ի յոսկր անցաւ, այլ չի մնաց համբերութիւն», և կամ՝ ինչու՞ էր խոսքն ուղղելով ասածուն, դրում՝

«Դու ևս, Տէ՛ր, խընդրող վըրէժից,
Ի խոր նայիս անդրնդային,
Լսես ձայնի հառաչանաց
Եւ հեծութեանցըն տընանկին:
Դու գրբկելոց ևս ողորմած»¹:

Մի՞թե բանաստեղծի նշած հառաչանքների և հեծությունների ձայները կամ զրկումները չեն վերաբերում Արղուն խանի տիրապետության ժամանակաշրջանին: Ո՞վ էր առաջին հերթին պատասխանատու այդ բոլորի համար: Իհարկե Արղունը, քանի որ նա էր Բուղային և նրա կողմնակիցներին նշանակել բարձր պաշտոններում և հովանավորում էր նրանց:

Ա. Հովհաննիսյանը վերջերս լույս ընծայած իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» արժեքավոր մենագրության մեջ առարկելով «Քնդդէմ ֆալաքին» բանքի «Հիմիկ դժարեց բաներս, որ թաթարն եղաւ թագաւոր» տողի մեր մեկնարանության ղեմ, գտնում է, որ դա թաթարական ռեժիմի մի ընդհանրացած պատկեր է, և որ և՛ թե մեր մեկնարանությունն ընդունվի, ապա դուրս կգա, որ Ֆրիկը գոհ էր «Իսլամի թագավոր» Թագուղար-Ահմեդից և զժգոհ՝ «աստվածադիր» Արղունից²:

Որ իրոք Ֆրիկը մասսաչիսության գործի հետ կապված անձնապես ավելի գոհ պետք է եղած լիներ Թագուղար-Ահմեդի, քան Արղունի դաժակալության ժամանակաշրջանից, գոնե մեղ համար անկասկած է: Ֆրիկի «Քնդդէմ ֆալաքին» և «Վասն Արղուն դանին և Բուղային» բանքերի, ինչպես և Ռաշիդեդդինի վկայությունների ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ մասսաչիսները Թագուղար-Ահմեդի ժամանակ իրենց ունեցած բարաթների դիմաց որոշ դուժար ստանում էին, մինչդեռ Արղունի դաժակալության հենց սկզբից դրանց վճարումը լրիվ կերպով զաղարկեցվում է: Բացի այս նկատի պետք է ունենալ և այն, որ Ֆրիկը իր «Քնդդէմ ֆալաքին» տաղը գրել է Արղունի դաժակալության

¹ Դիվան, Լե, 56—60 (Լճ 423—424): Հմմտ. Բանաստեղծ., XXXVIII, էջ 55—59 (էջ 211):

² Ա. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հրատ. Հայկական ՍՍՌ ԳԱ, Երևան, 1957, էջ 236:

առաջին կամ երկրորդ տարում, այսինքն այն ժամանակ, երբ դեռ հայտնի չէր Արդունի վերաբերմունքը քրիստոնյաների հանդեպ:

Ե՛րբ է դրել Յրիկն իր «Ընդդէմ ֆալաքին» լանքը: Այն չպետք է գրված լինի Սահիպ Դիվանի մահապատժից, այն է՝ 1284 թվականի հոկտեմբերի 16-ից անմիջապես հետո: Դժվար չէ նկատել, որ Բուղայի ոսկու մեջ թաղվելու, թաղավորի նման շփանալու, մասսաչիններին զրկելու և որոշ չափով հուսահատեցնելու համար անհրաժեշտ էր որոշ ժամանակ, թեկուզ ասենք մեկ կամ երկու տարի: Նշելով այս նկատառումներից դուրսում ենք, որ «Ընդդէմ ֆալաքին»-ը 1285—1286 թվականների ստեղծագործություն է:

«Ընդդէմ ֆալաքին» տաղում ֆալաքը բարկացած ասում է բանաստեղծին՝ «Սի՛ հաչեր, անգէտ հալւոր»: Սի կողմից ընդունելով, որ այս տաղը գրված է 1286 թվականին, իսկ մյուս կողմից, որ «հալւոր» նշանակում է «շուրջ հիսունամյա մարդ», Մ. Արեղյանը Յրիկին ծնված է համարել 1236 թվականին: Հանգուցյալ դիտնականը որպես իր այս տեսակետը ապացուցող կարևոր հիմք սխալ կերպով մատնանշել է նաև բանաստեղծի «Աւուրքս անցան հետ մասսասիս» տողը, ենթադրելով, որ իբր թե այստեղ Յրիկն ուզում է ասել, թե իր աչքը բացել կամ ծնվել է թաթարների իշխանություն հետ միասին, այսինքն՝ ծնվել է թաթարների Հայաստան արշավելու տարում, 1236 թվականին¹:

Ա. Հովհաննիսյանը եթե մի կողմից իրավացի ու ճիշտ կերպով հերքել է Մ. Արեղյանի երկրորդ հիմքը, ապա մյուս կողմից ոչ իրավացի կերպով մերժել է նաև նրա առաջին հիմքը, պարզապես հենվելով իր իսկ կատարած այն սխալ ենթադրության վրա, որ իբր թե «Ընդդէմ ֆալաքին» տաղը գրված է 1295—1298 թվականներին: Ընդունելով այս տաղի գրության համար իր առաջարկած թվականները և սրանից Մ. Արեղյանի հետևողությամբ դուրս դալով 50 տարի, Ա. Հովհաննիսյանը Յրիկին ծնված է համարել 1245—1248 թվականներին:

Մեր քննությունից հետո, երբ վերանում են «Ընդդէմ ֆալաքին» բանքի գրության ժամանակը խախտելու ուղղությամբ Ա. Հովհաննիսյանի բերած փաստարկումները, բնական է ու պարզ, որ վերանում են նաև Յրիկի ծննդյան տարեթիվը խախտելու նրա հիմքերը:

Համառոտակի աշխատենք պարզել նաև «Գանգատ» բանքի գրության ժամանակը: 1938 թվականին առաջին անգամ մենք էինք ցույց տվել, որ Յրիկի Նշանավոր «Գանգատ»-ը գրվել է 1295 թվականին կամ նրանից մի քիչ հետո². այս տեսակետը հետագայում ընդունվեց նաև Մ. Մկրյանի և Մ. Արեղյանի կողմից: Այս տաղի գրության թվականը որոշելու հարցում մեզ համար հիմք էր ծառայել ներքոհիշյալ քառատողը.

«Այլ կամք ի ձեռս անօրինի,
Որ կու վարեն անգին գերի.
Որքան քակեն եկեղեցի,
Քանի շինեն պիղծ մըղկիթնի»³:

Մեր հոգվածում ցույց էինք տվել, որ մոնղոլական տիրապետության շրջանում առաջին անգամ քրիստոնյաների դեմ հալածանքներ են հարուցվում և

¹ Մ. Արեղյան. Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2-րդ, էջ 542—543,

² Հ. Վահրադյան, «Գանգատ»-ի երկու վարիանտների մասին, «Կրակտն թերթ»։ 1938, հոկտ. 15-ի համարը:

³ Յրիկ. Բանաստեղծություններ, ԽԱ, 43—46 (էջ 233):

մասսայաբար եկեղեցիներ են քանգվում միայն 1295 թվականին էմիր Նուրուդին Տրամանով: Ղազան խանը (1295—1304) նույն թվականին արգելում է այդ հալածանքը: Այնուհետև նշել էինք, որ Ֆրիկի այս քառատողը գրաված պետք է լինի վերոհիշյալ ղեպերի անմիջական ազդեցության տակ:

Ա. Հովհաննիսյանը, առաքելով Մ. Աբեղյանին, գտնում է, որ «Գանդատ»-ը կարող է գրված լինել նաև 1298 թվականից հետո, քանի որ բոտ Ռաշիդդդինի վկայության, այս թվականին ևս եկեղեցիներ են քանդվել Թավրիզում¹:

Մեզ բոլորովին անհամոզեցուցիչ և անհավանական է թվում Ա. Հովհաննիսյանի այս ենթադրությունը: Մատնանշված վկայության մեջ պատմիչը հայտնում է. «Հեջիրի 697 թվականի շավվալ ամսի 10-ին, կիրակի օրը (21/VII 1298) թավրիզեցի հասարակ ժողովուրդը աղմուկ բարձրացրեց և քանդեց մնացած եկեղեցիները: Իսլամի վեհապետը (Ղազան խանը) զայրացավ և պատժեց մի քանի խռովարարների»²: Մահմեդական մոլեռանդ ամբոխի կողմից Թավրիզի մնացած եկեղեցիների քանդման այս մասնակի ղեպը չէր կարող Ֆրիկի վերոհիշյալ քառատողի հորինման անմիջական առիթը հանդիսանալ, քանի որ այդ քառատողում բանաստեղծը ոչ թե ակնարկում է եկեղեցիների քանդման մի մասնակի ղեպ, այլ նկատի ունի բազմաթիվ եկեղեցիների մասսայական քանդումները: Իհարկե, Ֆրիկի վերոհիշյալ քառատողի համար անմիջական առիթ կարող էին ծառայել նաև Օլջեյթու-Խարբանդա խանի (1304—1316) ժամանակ քրիստոնյաների դեմ հարուցված խիստ հալածանքները: Սակայն, հենց ինքը՝ Ա. Հովհաննիսյանը իրավացի կերպով հնարավոր չի համարում «Գանդատ»-ի գրությունը փոխադրել այս խանի ժամանակները: Ուստի մնում է ընդունել, որ «Գանդատ»-ը գրվել է 1295 թվականին կամ նրանից քիչ հետո:

Ֆրիկի տաղերի ժամանակագրական մոտավոր հերթականությունը, նրա ալա կամ այն տաղի գրության շրջանը որոշելու ժամանակ ոչ միայն հաշվի պետք է առնել տարբեր տաղերում արտահայտված տրամադրությունների, գաղափարների մերձավորությունը, այլև առաջին հերթին այդ տաղերում պահպանված ինքնակենսագրական բնույթի ուղղակի կամ անուղղակի տվյալները:

Ֆրիկի տաղերում պահպանված վկայություններից երեւում է, որ մեր անվանի տաղասացը մասսաշիններից մեկի ընկերակիցը դառնալով ոչ միայն կորցրել է իր հարստությունը, այլ իր նմաններից շատերի պես ընկել է մեծ պարտքերի տակ:

Բացի «Վասն Արդուն զանին և Բուղային» բանքից, Ֆրիկը իր ունեցած ծանր պարտքերի մասին հիշատակում է նաև «Վասն գալեհի և բրջի» նշանավոր տաղի մեջ:

«Աւաղ թէ մեռնիմ պարտօք և շըլնի պարտքըս վըճարած...:

Աստուած, մի՛ առնէր ինձ ըստ շատ շար մեղացն, որ է իմ գործած.

Մինչ որ վըճարի պարտքերս, որ ի յիմ շալակս է կուտած»³:

¹ Ա. Հովհաննիսյան. Նշված աշխատությունը, էջ 90—91:

² Рашид-ад-дин, т. III, էջ 179:

³ Դիվան, Իթ, 34 և 41—42 (էջ 388): Հմմտ. Բանաստեղծ., XL. 34 և 39—40 (էջ 228):

Բերված հատվածից երևում է, որ Ֆրիկն այստեղ խոսում է միայն իր ունեցած ծանր պարտքերի և այդ պարտքերը վճարել չկարողանալու վախի մասին: Սակայն ամբողջ տաղում նա ոչ մի ակնարկ չի անում իր տնից-տեղից զրկվելու, անօթեան մնալու, որդուն զրավ դնելու և այլ նման բաների մասին: Հատկանշական է, որ Ֆրիկը խոսելով իր ծանր պարտքերի մասին, ոչ թե մտածում է հանդերձյալ կյանքի մասին, այլ խնդրում է աստծուց իր կյանքը երկաբացնել մինչև պարտքերից ազատվելը: Բանաստեղծը դեռ իր մեջ զործելու մեծ ուժ է զգում և հույս ունի, որ առանց կողմնակի օժանդակության, իր սևփական ուժերով կարող է ազատվել այդ պարտքերից:

Արված գիտություններից հետևում է, որ «Վասն դալեհի և բրջի» տաղը ավելի վաղ է գրված, քան Ֆրիկի այն բոլոր տաղերը, որոնց մեջ բանաստեղծը խոսում է իր տնից-տեղից զրկվելու, անօթեան մնալու, որդուն կորցնելու մասին, և կամ մտածում է «ահեղ դատաստան»-ի, մահվան, հանդերձյալ կյանքի և նման բաների մասին:

Ուսումնասիրողը հեշտությամբ կարող է նկատել, որ «Վասն դալեհի և բրջի» տաղը հանդիսանում է նշանավոր «Գանդատ»-ի նախահղացված օրինակը, նրա սեղմ տարբերակը, որը սակայն իր վրա ուժեղ կերպով կրում է նաև «Ընդդէմ ֆալաքին» տաղի ազդեցությունը: Ուստի մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ «Վասն դալեհի և բրջի» տաղը գրված է «Ընդդէմ ֆալաքին» տաղից հետո, բայց «Գանդատ»-ից առաջ, հավանաբար՝ 1290—1295 թվականներին:

Իր պարտքերը վճարել չկարողանալու մասին Ֆրիկի ունեցած վախը խսկապես շուտով արդարանում է: Նվ մեր հեղինակը ոչ միայն զրկվում է տնից-տեղից և անօթեան մնում, այլև նույնիսկ մնացած պարտքերի դիմաց, գոյություն ունեցող օրենքի համաձայն, ստիպված է լինում իր որդուն զրավ դնել:

«Գնաց մանկութեան հասրաթն» տողով սկսվող ինքնակենսագրական բնույթի տաղում կարդում ենք.

«Գաղան 'ը անասուն ու հաւք, դեմ ունին իրենց տուն ու բուն,
Ո՛չ տուն ու ո՛չ տեղ ունիմ, կու խոցիմ ի յանհաւատուն:
Կասեն թէ խըմէ գինի, որ լինես դու մի պահ ի քուն,
Ուսկայ ի պարտուց յահուն կու գողամ զինչ ուն ի քամուն:
Դրրի զիմ որդին գրբաւ, ուստի ճուղապ զընալուն.
Միթէ թագաւորն երկնից՝ նա բերէ զիմ որդին ի տուն:
Հաղար ցեղ թապտիր կածեմ՝ թէ բաներուս ելնեմ ի հուն»¹:

Բերված հատվածից երևում է, որ Ֆրիկը իր տնից-տեղից զրկվելուց և իր որդուն զրավ դնելուց հետո էլ իր ունեցած պարտքերի ահից գողացել է: Այստեղ հիշատակված անհավատը, որից տաղառացը խոցվել է, պետք է ենթադրել, որ հանդիսացել է նրա պարտատերը, որը եղել է մոնղոլ, պարսիկ կամ հրեա:

¹ Դիվան, Ժէ, 5—11 (էջ 342): Հմմտ. Բանաստեղծ., III, 2—9 և ծանոթությունը (էջ 40):

Ֆրիկը իր տուն-տեղ, որդի, դուստր, կին, եղբայր չունենալու, իր թշվառ ու ծանր դրության մասին հիշատակում է նաև այլ տաղերում. «Գեղեցիկ պատկերք ու հեր» բառերով սկսվող տաղում կարդում ենք.

«Ձի դիտեմ թէ ուր մեռանիմ, ոչ զոք ունիմ, որ թաղէ զիս.
Ոչ ունիմ տեղ հանգրստեան, ոչ խընդացել եմ յիմ որդիս.
Ոչ եղբայր ոչ ոչ զոք ունիմ, որ աւաղէ, ամսոսայ զիս»¹:

Գրեթե նույնը կարդում ենք նաև «Նկայք, որ ի բաց թողունք» բառերով սկսվող տաղում:

«Աճապ ամ, յէ՞ր կու դատիս յաշխարհիս երակ դու, Ֆրիկ,
Ո՛չ տուն ու ո՛չ տեղիք ունիս և ո՛չ կին, ո՛չ դուստր ու որդիք»²:

Երբ է Ֆրիկը սնանկացել, ունեցվածքից ու տնից զրկվել, դրավ զրել էր որդուն, թշվառ և անօգնական վիճակի հասել:

1285 կամ 1286 թվականին գրած «Ընդդէմ ֆալաքին» բանքում Ֆրիկը որքան էլ որ դանգաւում է ֆալաքից, մութ ականարկ կատարում իր ոչ նախանձելի վիճակի մասին և պահանջում բախտի անիվից ետ դառնալ, այնուամենայնիվ դեռևս չի խոսում հարստութունից լրիվ զրկվելու և անտիրական ու թշվառ դրության մեջ ընկնելու մասին: Նույնպիսի ականարկներ չկան նաև նրա 1289—1295 թթ. գրած «Վասն Արդուն զանին և Բուղային», «Վասն գալեհի և բրջի» և «Գանգատ» բանքերում, չնայած նրան, որ սրանց մեջ իր գրության ծանրացման, ունեցած պարտքերի և աղքատանալու մասին եղած ականարկները ավելի ուժեղ են, ինչպես ինքն է ասում՝ «Ցաւս երկարեց ու յոսկր անցաւ, այլ չի մրնաց համբերութիւն»։ Այս տաղերի ուշադիր քննութունից հետևում է, որ Ֆրիկն ամեն ինչ կորցրել և ծանր ու թշվառ դրության մեջ է ընկել 1295 թվականից հետո, այսինքն՝ այն ժամանակ, երբ մեր բանաստեղծը ծեր էր, մոտ 60 տարեկան:

Որ իսկապես Ֆրիկը շուրջ 60 տարեկան հասակում է ամեն ինչ կորցրել ու ծանր, անտիրական դրության հասել՝ երևում է նաև «Գեղեցիկ պատկերք ու հեր», «Նկայք, որ ի բաց թողունք» և «Գնաց մանկութեան հասրաթն» բառերով սկսվող տաղերից: Առաջին տաղում Ֆրիկն ինքն իրեն համար ասում է՝ «ի ծերութեան չի դուրիս» կամ «եղով ու վայ ինձ՝ այս ծերիս»³, իսկ երկրորդում՝ «Բո սեղ ի սպիտակ դորձաւ»⁴: Այս՝ երկրորդ տաղից վերևում մեջ բերված քառատողից իմանում ենք նաև, որ նա դեռ աշխատելու ընդունակ է («Աճապ ամ, յէ՞ր կու դատիս»), ուժից ու կարողութունից դեռ չի ընկել:

«Ֆրիկ, զինչ ծրնծղայ ես դու» տողով սկսվող տաղի գրության ժամանակ ևս նրա մտքերը «ի սպիտակ» էին դարձած: Այդ տաղում բանաստեղծը իր մասին գրում է.

¹ Դիվան, Դ, 9—11 (էջ 264): Հմմտ. Բանաստեղծ., II, 10—15 (էջ 31):

² Դիվան, Ի, 36—37 (էջ 351): Հմմտ. Բանաստեղծ., XIII, 34 (85):

³ Դիվան, Դ, 20 և 31 (էջ 265—266): Հմմտ. Բանաստեղծ., II, 33 և 35 (էջ 32—33):

⁴ Դիվան, Ի, 45 (էջ 352): Հմմտ. Բանաստեղծ., XIII, 41 (էջ 86):

«Արի ու պընդէ ըզմէջքդ և զըտիր հիմիկ քեզ ճարակ,
Մինչ է զգայարանքդ առողջ և մարմինդ ամէն՝ լուվանդակ:
Թէ չէ՝ երբ յուժոյ թափիս և չկարես կանգնել դու շիտակ,
Ասես՝ թէ եղուկ ես զայս չիմացայ ու թուլանաս յերակ»¹:

Այս տողերը գրող հեղինակը ուժասպառ ծերունի չէ, նրա զգայարաններն առողջ են, կանգնում ու քայլում է ուղիղ, և ողջ օրը մտածում է շահի ու վնասի մասին («Ձօրն շահ ու դէն քըննես, Երազով դատիս դու համակ»)²:

Ֆրիկի տարրեր տաղերից բերված վերոհիշյալ ինքնակենսագրական ընույթի տվյալներից հետևում է, որ մեր տաղասացը իր հարստությունը, տունն ու տեղը, որդուն կորցրել է իր ծերության, բայց ոչ դառամյալ ծերության հասակում, այլ խոսքով մոտավորապես 60 տարեկան եղած ժամանակ:

Բնական է ենթադրել, որ Ֆրիկը իր կորցրած հարստության ու փարթամության, առաջներում անցկացրած շուշկ կանքի և կերուխումի մասին պետք է հիշատակեր իր սնանկությունից անմիջապես հետո ընկած առաջին ժամանակաշրջանում, այսինքն՝ այն ժամանակ, երբ նրա հիշողության մեջ դեռ թարմ էին տեղի ունեցած դժբախտ իրողությունները և նա գտնվում էր իրանց անմիջական ավերացության տակ: Բացի վերևում քննարկված «Գնաց մանկութեան հասրաթն», «Գեղեցիկ պատկերք ու հեր», «Եկայք, որ ի բաց թողունք» և «Ֆրիկ, զինչ ծընծղայ ես դու» բառերով սկսվող տաղերից, կարծում ենք, որ այս ժամանակաշրջանում են գրված նաև «Հանց մեծամեծ խորհուրդ արի» («Ողբանք փոշիմանություն»), «Ելլայք, լրսեցէք խրատի» («Յալագս փոշիմանություն») «է անօրէն և անառակ երիտասարդ լրսէ զիմս դու», «Եատ ոլրեցի մարդու մոլոյս», «Իմ սիրտ, վատին մի լրսեր», «Եղլայք, լսեցէք բանիս», «Ողբանք անուշ լրսեցէք», «Կուղե՛ս, որ ավիզ կենաս» տողերով սկսվող ստեղծագործությունները:

Իր մի շարք տաղերում ինքն իրեն Ֆրիկը կոչում է «գանձով գրնած... գերի», «մեղատուր և աղքատ Ֆրիկս ու գերի», «գերի Ֆրիկ, ողորմելի», «գերի Ֆրիկ», «գերիս» և այլն: Ա. Հովհաննիսյանն արդեն ճիշտ կերպով ցույց է տվել, որ Ֆրիկի մոտ այս արտահայտությունները միշտ չէ, որ հանդիսանում են բրիստոնեական ինքնադատափետման ձև, այլ դրանք հաճախ նշանակում են «Գանձով գնված կամ պարտք վերցրած «գանձի» գիմաց գերի ու ստրուկ դարձած անվճարունակ պարտապան»³: Մ. Արեղյանը, մեջ բերելով առաջին վկայությունը, գրում է. «Եթե բառացի հասկանանք, Ֆրիկը գերի է ընկել, հարկավ, թաթարների ձեռքը, և փրկանքով գնվել, ազատվել է»⁴: Մենք արդեն տեսանք, որ Ֆրիկը իր տնից-տեղից զրկվելուց և իր որդուն գրավ գնելուց հետո էլ չէր ազատվել պարտքերից: Գոյություն ունեցող օրենքի համաձայն, անշուշտ, պարտատերը Ֆրիկին ևս որպես անվճարունակ պարտապան վերցրած պետք է լինե՝ որպես ստրուկ աշխատեցնելու կամ վաճառելու համար: Պետք է ենթադրել, որ հետագայում բանաստեղծի ծանոթները կամ ուրիշները նրան գնել են պարտատիրոջից և ազատել: Այս սյարգարանումից հետևում է, որ Ֆրիկի աչն բոլոր տաղերը, որոնց մեջ բանաստեղծն իրեն անվանում է «գերի» կամ «աղքատ», գրված են նրա տնից-տեղից զրկվելուց, իր որդուն գրավ

¹ Դիվան, ԻԵ, 54—57 (էջ 368): Հմմտ. Բանաստեղծ., VІІ, 52—55 (էջ 59):

² Դիվան, ԻԵ, 9 (էջ 366): Հմմտ. Բանաստեղծ., 7 (էջ 57):

³ Ա. Հովհաննիսյան. նշված աշխատությունը, էջ 53:

⁴ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2-րդ, էջ 253:

լուց հետո: Այդպիսիներից են. «Հանց մեծամեծ խորհուրդ արի» («Ողբանք փոշիմանութեան»), «Գեղեցիկ պատկերք ու հեր», «Շատ ոլրեցի մարդու մորոյս», «Աստուծոյ զօրութիւն և կամքն է օրհնեալ», «Փափագել եմ ի ջուրն», «Դու աստուած ես յաւիտենից կենդանի», «Օրհնեալ անուն արարողին» («Վասն ի վերայ եղբայրասպանին»), և «Յիսուս անուն յիս գթացար» տողերով սկսվող տաղերը:

Ա. Հովհաննիսյանը իր աշխատութեան մեջ գտնում է, որ Ֆրիկի այն տաղերը, որոնց մեջ բանաստեղծը որոնում է իր հոգին և միտքը ամոքող աստվածային դոհար, մարդարիտ, լույս, սեր և այլն գրվել են ավելի վաղ, քան «Ընդդէմ ֆալսքին», «Վասն դաւիթի և բրջի» և «Գանգատ» տաղերը¹: Քանի որ ըստ Ա. Հովհաննիսյանի Ֆրիկը ծնվել է 1245—1248 թվականներին, իսկ ստեղծագործել է սկսել 1280 թվականից, ապա ստացվում է, որ Ֆրիկը նման տաղերը գրել է 32—35 տարեկան հասակում: Ա. Հովհաննիսյանը իր ուսումնասիրության մեջ ավելի վաղ գրված համարվող այդ տաղերից մատնանշում է՝ «Յաղագս փոշիմանութեան», («Նղրարք, լրսեցէք խրատի»), «Խրատ հոգեշահ» («Փափագել եմ ի ջուրն»), «Խրատ հոգեշահ վասն հաւատոյ» («Վանչեմ ի մեղաց վերայ») և «Բան լաւ» («Շատ ոլրեցի մարդու մորոյս») տաղերը²:

Քննենք մատնանշված տաղերն ըստ էության և տեսենք, թե արդյո՞ք հիշում է Ա. Հովհաննիսյանի վերոհիշյալ ենթադրությունը:

«Յաղագս փոշիմանութեան» տաղում Ֆրիկը գրում է.

«Որդեա՛կ, թէ լրսես դու ինձ ու ականջ դնես խրատի...
Դու լեր կամաւոր աղքատ, խոնարհիր դու փոքր ու մեծի:
Բաշխէ գինչ ունիս այսօր, որ չի լինիս ողորմ ու լալի»³:

կամ՝

«Այս կեանքս է ժանդոտ պղդինձ, որ ներքե հոգին կու փըտի»⁴:

և կամ՝

«Ֆրիկ, շահ ու գէն արա, իմացիր թէ ո՞րն կու պիտի,
Թէ զարքալութիւն ուղես յաշխարհէս դու շուտ մի արի»⁵:

Իր ունեցվածքը ինքնուրույն կերպով տնօրինելու իրավունք ունեցող Համաճաս մարդուն՝ «որդեալ» տնվանելը, նրան նման խրատներ տալը, այս կյանքը «ժանդոտ պղինձ» համարելը, աշխարհից շուտով գնալու թեկուզ հարցի գրումը ինքնին ցույց են տալիս, որ Ֆրիկը իր այս տաղը գրել է ծերութեան հասակում և աղքատության ժամանակ:

«Բան լաւ» տաղում Ֆրիկն իր մասին գրում է.

«Շատ ոլրեցի մարդու մորոյս,
Երեկ ինձ բեռ եղաւ գերոյս.
Շատ պարծեցայ ի վերայ ոսկոյս,
Սարվեմ, հագնեմ թաւ և խընդուզ...» և այլն⁶:

¹ Ա. Հովհաննիսյան, *Նշված աշխատություններ*, էջ 86—87:

² Նույն տեղում, էջ 56—58:

³ Գիվան, ԻԳ, 21—27 (էջ 363): Հմմտ. Բանաստեղծ., 1V, 18—24 (էջ 43):

⁴ Գիվան, ԻԳ, 30 (էջ 363): Հմմտ. Բանաստեղծ., 27 (էջ 43):

⁵ Գիվան, ԻԳ, 37—38 (էջ 364): Հմմտ. Բանաստեղծ., 34—35 (էջ 43):

⁶ Գիվան, ԺԳ, 4—8 (էջ 329): Հմմտ. Բանաստեղծ., XV, 2—6 (էջ 92):

Երբեմն հարուստ եղած ու երիտասարդ Ֆրիկը շատ մարդկանց մորուսն է ոլորել, սակայն ճակատագրի դառնությունը այժմ նույնը բաժին է ընկել իրեն: Խշվառ, աղքատ ու ծերացած բանաստեղծը այս դեպքի կապակցությամբ էլ վերհիշում է երբեմնի ունեցած իր հարստությունը, նրանով պարծենալը, իր վաղեմի ձգտումներն ու երազները: Այս տաղում Ֆրիկն իրեն ոչ միայն անվանում է «գերի», այլև «ծեր»:

«Երբ իմացայ դարն ի բարուս,
Ձաշխարհս յաշիցս ելաւ գերուս»¹:

կամ՝

«Գիտեմ այս չէ յիսնէ՝ հողոյս,
Հողին շընորհք երես ծերոյս»²:

Բերված փաստերը անվիճելի կերպով ապացուցում են, որ այս տաղը ևս գրված է Ֆրիկի սնանկությունից, տնից-տեղից զրկվելուց հետո միայն, նրա ծերության տարիներին:

«Յաղագս փոշիմանութեան» տաղում Ֆրիկը հայտնում է.

«Շատ մի հայերէն բաներ խորհրդով՝ դրախտ տընկեցի,
Յաշիցրս աղբերացն ջուր քաշեցի, զինչ որ արնուցի»³:

«Խրատ հոգեշահ վասն հաստոյ» տաղում նույնպես կարդում ենք.

«Շատ հայերէն բաներ տսի, ով լըսէ ու զինքն իմանայ»⁴:

Ինչպես տեսնում ենք Ա. Հովհաննիսյանի մատնանշած տաղերից երկուսը, Ֆրիկի իսկ վկայությամբ, նրա կրոնա-բարոյական բնույթի առաջին ստեղծագործությունների թվին չեն պատկանում, այլ դրանք մտնում են «շատ բաներ»-ի մեջ: Մինչդեռ արարչագործությունը փառարանող տաղերից մեկում, որը սկսվում է «Դու աստուած ես յաւիտենից կենդանի» տողով («Ի տնօրինութիւն փրկչին Յիսուսի Քրիստոսի»), Ֆրիկը գրում է.

«Մեղաւոր և աղքատ Ֆրիկս ու գերի,
Հողոյս ի՞նչ ոյժ լինի, որ զայս կու խօսի:
Թէ լինէր ինձ դովլաթ ու խելք ի բանի
Որ կարի հանց կենալ՝ ինչ քեզ կու պիտի,
Է աւա՞ղ, է աւա՞ղ, ափսոս կու լինի,
Ձիմ խելաց ոյժս յինէն զինին կու տանի:
Պարտական եմ հողով՝ լեզուս կու կապի,
Թէ չէ այլ շատ բաներ յառաջ հանէի»⁵:

¹ Դիվան, ԺԳ, 22—23 (էջ 329): Հմմտ. Բանաստեղծ., XV, 20—21 (էջ 92):

² Դիվան, ԺԳ, 40—41 (էջ 330): Հմմտ. Բանաստեղծ., 38—39 (էջ 93):

³ Դիվան, ԻԴ, 49—50 (էջ 365): Հմմտ. Բանաստեղծ., IV, 46—47 (էջ 44):

⁴ Դիվան, ԻԸ, 36 (էջ 382): Հմմտ. Բանաստեղծ., XXV, 66—67 (էջ 149):

⁵ Դիվան, ԼԹ, 61—67 (էջ 448—449): Հմմտ. Բանաստեղծ., XXVI, 58—65 (էջ 152—

ինչպես տեսնում ենք, Ֆրիկը ինքն է վկայում, որ այս տաղից առաջ կրոնա-բարոյական շատ տաղեր չի գրել, և որ սա հանդիսանում է իր կրոնա-բարոյական առաջին ստեղծագործություններից մեկը:

Այս տաղում Ֆրիկը ինքն իրեն ոչ միայն անվանում է «մեղաւոր» և «գերի», այլև «աղքատ»: Սրանից հետևում է, որ Ֆրիկը ոչ միայն այս, այլև Ա. Հովհաննիսյանի մատնանշած բոլոր տաղերը ոչ թե գրել է 32—35 տարեկան հասակում, այլ իր ծերության ժամանակ, իր տնից-տեղից ղրկվելուց, այսինքն՝ սոցիալական բովանդակություն ունեցող տաղերից հետո միայն:

Ֆրիկի երկերի առաջին հրատարակության առթիվ գրած իր առաջարկում Մ. Մկրյանը գտնում է, որ Ֆրիկը ստեղծագործության երկու շրջան է ունեցել: Ըստ նրա, Ֆրիկը սկզբում գրել է կրոնա-բարոյական բնույթի, կյանքի ունայնության տաղեր, իսկ հետագայում, իր կյանքի վերջին շրջանում, շրջադարձ կատարելով, գրել է աստծո, ֆալաֆի, անսեռական-սոցիալական անհավասարության դեմ ուղղված տաղեր: Ելնելով իր այս բաժանումից, Մ. Մկրյանը նշանավոր «Գանգատ»-ը համարել է Ֆրիկի վերջին ստեղծագործություններից մեկը¹:

Իհարկե շատ լավ կլիներ, եթե Ֆրիկի ստեղծագործության շրջանները իրականության մեջ էլ բաժանված լինեին այնպես, ինչպես ենթադրել է Մ. Մկրյանը: Սակայն, դժբախտաբար, դա այդպես չէ:

Ֆրիկը իր մաղերը սպիտակելուց հետո էլ երկար ժամանակ գրել է կրոնա-բարոյական տաղեր: Դա պարզ կերպով երևում է նրա մի քանի տաղերից, որոնց մեջ բանաստեղծը իր տարիքի մասին տեղեկություններ է հայտնում:

«Երբ որ յէդուց մեռնելու ես» բառերով սկսվող բանքում Ֆրիկը իր մասին ասում է.

«Զիւնն ալիքդ է ըսպիտակել՝
Զմեռն է այն, որ ուժ չունիս»²:

կամ՝

«Տարաժամեց օրս ու զընաց»³:

«Ողբանք զղջման ի հոգի» («Զանացի թէ ի լոյս ելնեմ») տաղում կարդում ենք.

«Ալիքս ի դեղին դարձեր»⁴:

Բերված վկայությունները ոչ միայն ցույց են տալիս, որ Ֆրիկը ստեղծագործել է նաև իր դատամյալ հասակում, այլև այս տաղերը, բայց հատկապես վերջին տաղը գրելու ժամանակ՝ առնվազն եղել է 75 տարեկան, մի տարիք, որի ժամանակ կամ հետո սկսում է դեղնել մարդու ալիքը: Որ իսկապես Ֆրիկը 75 տարեկան, դուցե և ավելի հասակում կրոնա-բարոյական տաղեր է հորինել, երևում է նաև «Տաղ ի վերայ ծովադեալ մեղաց մարդոյ» («Ճառաջն, որ յաշխարհս եկի») ստեղծագործության ներքոհիշյալ հատվածից:

¹ Մ. Մկրյան, Ֆրիկի ստեղծագործություններ, տե՛ս Բանաստեղծ., էջ 12—13:

² Դիվան, Ե, 70 (էջ 270): Հմմտ. Բանաստեղծ., II, 130—131 (այստեղ երկու տաղեր խառնված են իրար), (էջ 37):

³ Դիվան, Ե, 65 (էջ 269): Հմմտ. Բանաստեղծ., 120 (էջ 36):

⁴ Դիվան, ԺԶ, 8 (էջ 336): Հմմտ. Բանաստեղծ., XII, 7 (էջ 79):

«Ահա, որ աշուն երեկ, կու շարժիմ քամին կու տանի,
 Զօդուածս ի թռումիլ արեր՝ զինչ կրտրած ծառն, որ ցամաքի:
 Ոտիցս ի գրնալ առնում, նայ, դողայ ու ի յետ կոլորի,
 Աշերս իմ սակաւ հայի, իմ թութակ լեզուս կարկամի»¹:

Եթե նույնիսկ ընդունենք, որ Յրիկը իր այս տաղը գրել է 75 տարեկան հասակում և դա հանդիսանում է բանաստեղծի կրոնա-բարոյական այն վերջին տաղը, որից, ըստ Մ. Մկրյանի, Յրիկը շրջադարձ է կատարել, ապա կստացվի, որ Յրիկը իր սոցիալական բովանդակություն ունեցող առաջին գործը՝ «Ընդդէմ ֆալափին» տաղը գրել է 76 տարեկան հասակում, իսկ նշանավոր «Գանդատ»-ը՝ նրանից 9—10 տարի հետո, այն է՝ 85—86 տարեկան հասակում: Ասենք ըստ Մ. Մկրյանի էլ մոտավորապես նույնն է ստացվում, քանի որ ըստ նրա Յրիկը ծնվել է 1210—1220 թվականներին, «Ընդդէմ ֆալափին» տաղը գրված է 1286 թվականից հետո, իսկ «Գանդատ»-ը՝ 1295 թվականից հետո²:

Զառամյալ, ուժից ու կարողությունից ընկած, մի ոտքը դերեզմանում գտնվող Յրիկը, որ երկար աւրիններ աշխարհիկ կյանքի ունայնություն, «ահեղ դատաստանի» մասին բանքեր էր հորինել, արգյո՞ք կարող էր այդպիսի կտրուկ շրջադարձ կատարել և գրել աստծո, ֆալափի, կյանքի անարդարությունների և անհավասարության դեմ ուղղված բուռն բողոքի և ցասումնալից տաղեր: Մենք կարծում ենք, որ դա հնարավոր չէր: Դա հնարավոր չէր ոչ միայն նրա համար, որ Յրիկը զառամյալ էր, այլև առաջին հերթին այն պատճառով, որ մարդկանց մոտ գաղափարական շրջադարձերը այդպես հանկարծակի և խիստ կտրուկ կերպով տեղի չեն ունենում: Մարդիկ որքան էլ արագ և կտրուկ կերպով շրջադարձ կատարեն հից դեպի նորը, պարզ է, որ նրանք, գոնե որոշ ժամանակ, իրենց սնեցած նախկին գաղափարներից, հայացքներից ու հասկացողություններից լրիվ կերպով և անմիջապես չեն կարող ազատվել:

Անշուշտ Յրիկը նույնպես աստիճանաբար ասնցած պետք է լիներ սոցիալական տաղերից դեպի կրոնա-բարոյական տաղերը և կամ ընդհակառակը: Եթե այս տեսակետից քննարկենք մեզ հետաքրքրող հարցը, ապա կտեսնենք, որ իրոք, Յրիկի ինքնակենսագրական և կրոնա-բարոյական բնույթի մի շարք տաղերում, թեկուզ և փոփոխված ձևով, կան այնպիսի հատվածներ, որոնք իրենց վրա կրում են Յրիկի սոցիալական բովանդակություն ունեցող տաղերում արտահայտված հայացքների ազդեցությունը:

Յրիկը իր «Ընդդէմ ֆալափին» տաղում գրում է.

«Է՛յ Չարխ, երբ ծրոխ մարդուն՝ զօրն ի բուն փորես նորա հոր:
 Յորժամ դու քակես բզմանդ ու շթողուս, որ դառնայ յոլոր:
 Սահուն չ երերուն պահես յաստրնուրս ի գիլ չ ի դոլոր»:

«Վասն դալեհի և բըջի» տաղում կարդում ենք.

«Մարդոյն երբ դալեհն ու բուրջն ի ֆալափրն չէ բղորդած,
 Թէ շատ, թէ քըչիկ ջանայ, թէ բղորդին՝ այլ խիստ է ծրուած:

¹ Դիվան, ԽԶ 12—15 (էջ 482): Հմմտ. Բանաստեղծ., XXX, 18—25 (էջ 172):

² Տե՛ս, Յրիկ. Բանաստեղծ., էջ 6—9:

³ Դիվան, ԻԷ, 7—9 (էջ 371—372): Հմմտ. Բանաստեղծ., XXXIX, 2—7 (էջ 225):

Բանին ղորդն ու ծուռն, գէշն ու աղէկըն ի շարխն է կապած,
Եվ յօր ծրնրնդեան մարդոյն ոնց ի մօրէն ինքն բաժանած»¹:

Սոցիալական բովանդակություն ունեցող իր երկու նշանավոր տաղերում արտահայտված և գրեթե իրար նման այս մտքերը Ֆրիկր արտահայտել է նաև իր «Ողբանք փոշիմանություն» տաղում, որը ինքնակենսագրական և կրոնա-բարոյական բնույթ ունի: Այդ տաղում Ֆրիկը գրում է.

«Երբ ժամանակ մարդոյն ծրոփ, երեսք ի վայր դեմ գրորի,
Երթայ դիպնի հանցեղ դարի, որ ինչուի մահ ո՛չ վրձարի:
Երբ բախտն ընկեր էր՝ մանեցի, հիմիկ ոլորն յետ կու քակի,
Երբ խոլորով յիս կու նայի, այլ չի լրցուիլ կապի՞ճ շարի»²:

Ֆրիկը իր «Ընդդէմ ֆալաքին», «Վասն դալեհի և բրջի» և «Գանգատ» տաղերում գտնում է, որ մարդու հարստությունն ու աղքատությունը, նրա բախտավորությունն ու անբախտությունը սահմանված են աստծո, ֆալաքի, ճակատագրի կողմից, և որ մարդը առանց աստծո հրամանի, միայն իր աշխատանքով, իր ջանքերով ոչ միայն հարստության չի կարող տիրանալ, այլև կարող է մնալ աղքատ և հացի կարոտ: Այս նույնը Ֆրիկը կրկնում է նաև մեր կողմից արդեն մասամբ քննարկված «Յաղագս փոշիմանություն» տաղի ներքոհիշյալ հատվածում:

«Ասցի, թէ իմ ջափօքս առնեմ մեծութիւն՝ առանց հրամանի:
Եկին ինձ յերազն ապին, թէ այդ խիալդ, որ քեզ կու թրփ
Զինչ Աստուած է պատրաստել՝ օր վաւորն ի քեզ հասանի:
Առանց Աստուծոյ, հղբարք, ով ուզէ թէ ի հաց հասանէ
Նա գօրրն բորիկ կենայ և մերկիկ ի յաստրուորի»³:

Բերված այս երկու փաստերն էլ բավական են համոզվելու համար, որ իրոք, Ֆրիկի սոցիալական տաղերի և նրա որոշ կրոնական տաղերի միջև կապ գոյություն ունի, որ Ֆրիկը նույնպես իր շրջադարձը կատարել է աստիճանաբար:

Երբ է գրել Ֆրիկը իր այս տաղերը:

«Յաղագս փոշիմանություն» տաղի քննության կապակցությամբ տեսանք, որ Ֆրիկը այս տաղը գրել է իր հարստությունը կորցնելուց հետո, երբ նա եղել է ծեր և աղքատ: Սակայն, այս ժամանակ Ֆրիկը ծեր լինելով հանդերձ, զանազան չի եղել: Իսկապես կերպով երևում է այս տաղի ներքոհիշյալ հատվածից.

«Յորի՛կ, շահ ու զեն արա՞, իմացիր թէ ո՞րն կու պիտի,
Թէ վարքայութիւն ուզես՝ յաշխարհէս դու շուտ մի արի:
Ապա թէ զխաւարն ուզես ու զտանջանքն, ողորմ ու գերի,
Զօրրն կեր ու խում արա ու գործէ, դինչ որ քեզ պիտի»⁴:

¹ Դիվան, ԻԹ, 4—7 (էջ 383—384): Հմմտ. Բանաստեղծ., XL, 3—6 (էջ 225):

² Դիվան, Ը, 17—20 (էջ 289): Հմմտ. Բանաստեղծ., I, 31—38 (էջ 26):

³ Դիվան, ԻԴ, 10—14 (էջ 362): Հմմտ. Բանաստեղծ., IV, 7—11 (էջ 42):

⁴ Դիվան, ԻԴ, 37—39 (էջ 364): Հմմտ. Բանաստեղծ., 34—37 (էջ 43):

Այս վկայությունից հետևում է, որ Յրիկը այս ժամանակ ամենաշատը 66 տարեկան պետք է լիներ, այլապես նա չէր կարող մտածել ամբողջ օրը ուրախություն անելու և իր ցանկացածը կատարելու մասին: Յրիկը իր առաջ նույնիսկ հարց է դնում, արդյոք արքայությունն է շահավետ, թե՞ աշխարհիկ կյանքը:

Ինչ վերաբերում է «Ողբանք փոշիմանութեան» տաղին, ապա կարծում ենք, որ այն նույնպես գրված է «Յադագս փոշիմանութեան» տաղի ժամանակ: Այս տաղում է, որ Յրիկը հայտնում է, թե իր հարստությունը «բուզակ» է արել թաթարի, իր արած մեծամեծ վաստակը «հեղեղի է տվել»: Այստեղ Յրիկը իր մասին հայտնում է նաև՝

«Քանձով զընած ես դու գերի, դու է՞ր խըմես զօրրն Կինի...
Մինչ դեռ յուժի ես ու լուսի, կրթթէ զմարմինդ չի պարարի»¹:

Ինչպես տեսնում ենք, Յրիկը այստեղ ոչ միայն ամբողջ օրը գինի է խմում, այլև դեռ առողջ է. նա ոչ ուժից է ընկել և ոչ էլ աչքի լույսից: Իհարկե, նույնիսկ ոչ մի համեմատություն չի կարող լինել այն տեղեկությունների միջև, որ Յրիկը հայտնում է իր մասին մի կողմից՝ այս, իսկ մյուս կողմից՝ «Տաղ ի վերայ ծովացետի մեղաց մարդոյ» քերթվածքում, այնքան որքան երկրորդ քերթվածքում Յրիկը իր մասին հայտնում է, թե կտրված ծառի նման թռոտմել ու ցամաքել է, ոտքերը դողում և ետ են գլորվում, աչքերը քիչ են տեսնում, թուփակ լեզուն կարկամում է: Պարզ է նաև, որ մեզ հետաքրքրող տաղը շատ ավելի վաղ է գրված, քան «Ողբանք զղջման ի հոգի» կամ «Երբ յէգուց մեռնելու ես» տաղերը, որոնցից առաջինի մեջ Յրիկը իր մասին ասում է. «Ալիքս ի դեղին դարձեր», իսկ երկրորդի մեջ՝ «Ձիւնն ալիքդ է սղիտակել, ձըմեռն է այն, որ ուժ չունիս» կամ «Տարածամեց օրս ու զընաց»:

Մեր բերած բոլոր փաստերը անվիճելի կերպով ապացուցում են, որ Յրիկի սոցիալական, բողոքի ու բուռն ցասման տաղերի ազդեցությունը երևում է ոչ թե բանաստեղծի զառամյալ հասակում, այլ ծերության, մոտ 60 տարեկան հասակում՝ գրած ինքնակենսագրական և կրոնա-բարոյական տաղերի վրա, այսինքն՝ այն տաղերի վրա, որ Յրիկը ստեղծագործել է իր հարստությունը, առուն ու տեգր և որդուն կորցնելուց հետո ընկած առաջին ժամանակաշրջանում: Արդ՝ քանի որ Յրիկի զառամյալ հասակում գրած կրոնա-բարոյական տաղերի վրա չի երևում նրա սոցիալական տաղերի ազդեցությունը, ուստի ալտերից երևում է, որ Յրիկը իր կյանքի վերջում, զառամյալ հասակում շրջադարձ չի կատարել, և որ նրա սոցիալական. բողոքի ու ցասման տաղերը ավելի վաղ են գրված, քան նրա կրոնա-բարոյական տաղերը:

Եթե ընդունենք, որ Յրիկը իր կրոնա-բարոյական տաղերը գրել է ավելի վաղ, քան սոցիալական բովանդակություն ունեցող տաղերը, ապա պետք է ընդունենք նաև, որ Յրիկը իր կյանքի վերջում ոչ թե ավելի է ծերացել, այլ, հակառակ բնության բոլոր օրենքներին, երիտասարդացել է, քանի որ «Ողբանք զղջման ի հոգի» տաղում իր մասին ասում է «Ալիքս ի դեղին դարձեր», մինչդեռ «Ընդդէմ ֆալաքին» տաղում իրեն անվանում է «հալետր»²: «Ալիքս ի

¹ Դիվան, Ը, 47 և 50 (էջ 291): Հմմտ. Բանաստեղծ., I, 91—92 և 97—98 (էջ 28—29):

² Դիվան, ԻԷ, 47 (էջ 376): Հմմտ. Բանաստեղծ., XXXIX, 83 (էջ 221):

դեղին դարձեր» արտահայտությունը, որ իսկապես ավելի զառամյալ հասակի, խոր ծերության ցուցանիշ է, քան «Հալեոր» արտահայտությունը, ամեն տեսակի կասկածից վեր է: «Հալեոր» նշանակում է սպիտակախառն կամ սպիտակ մազեր ու մորուս ունեցող մարդ, փոխաբերական իմաստով՝ նաև՝ ծեր, որը ըստ Գրիգոր Տաթևացու սկսում է 46 տարեկան հասակից¹:

Ֆալաքի՝ Ֆրիկին տված պատասխանում, պատասխան, որի մեջ արտահայտված է բանաստեղծի բողոքի անձնական շարժառիթներից մեկը, ասված է.

«Զարինդր ի վերաս ձրդես՝ թէ ֆալաքն է ծուռ դատաւոր,
Զդիտե՞ս թէ արարչէն լինի, զով կամի առնէ մեծաւոր»:
Դարձեալ կու ասէ ֆալաքն ընդ աղքատ և ընդ զանձաւոր.
«Աստուած է տըւող բարեաց, որ առնէ զամէն զօրաւոր,
Հաղար թէ ֆալաքն եմ ես՝ չեմ կարող, որ տամ քեզ կրտոր»:
Հրաման յԱստուծոյ լինի՝ ես զուգեմ բղքեզ թաղաւոր,
Երբ որ չհաջողէ Աստուած, ո՞վ կարող է տալ քեզ կրտոր»²:

«Գանգատ» տալով Ֆրիկը, խոսքն ուղղելով աստծուն հարցնում է.

«Զզովլաթն ասա, թէ ո՞ւր լինի,
Եւ բախտաւորն ո՞ւր գտանի,
Որ ի շուրջ գամ տասն տարի
Եթէ կաթիլ մի ինձ հանդիպի»³:

Բերված հատվածներից դժվար չէ նկատել, որ Ֆրիկը դեռ ձգտում է հարցաստություն ձեռք բերել և դուրս գալ իր սնանկացած վիճակից: Նա նույնիսկ պատրաստ է տասը տարի «զովլաթ»-ի, այսինքն՝ բախտի իշխանության և բախտավորի շուրջ պտտվել, միայն թե այդ բախտավորությունից մի կաթիլ էլ իրեն հասնի: Եթե իրոք, Ֆրիկը իր այս տաղերը գրել է 76—86 տարեկան հասակում, ապա այն ժամանակ բանաստեղծը ու՛մ համար էր ձգտում հարստություն ձեռք բերել, չէ որ նա իր կրոնական տաղերի մեջ հայտնում է, որ չունի ո՛չ կին, ո՛չ որդի, ո՛չ դուստր և ո՛չ էլ եղբայր: Միթե՞ հնարավոր է ենթադրել, որ մահվան եզրին գտնվող, նույնիսկ աստծուց իր մահն ուղղող⁴ Ֆրիկը տասը տարի հետո էլ պատրաստ էր ևս տասը տարի պտտվել «զովլաթ»-ի և բախտավորի շուրջը, որպեսզի իրեն էլ «մի կաթիլ» հասնի:

Վերևում մեր կողմից մատնանշված փաստերը, որոնց թիվը կարելի էր բազմապատկել, կրկին անգամ ապացուցում են, որ Ֆրիկի սոցիալական տաղերը ավելի վաղ են գրված, քան նրա կրոնա-բարոյական տաղերը:

Ֆրիկն իր տաղերից մեկում, դիմելով իրեն ասում է, թե «ահեղ ատեան»-ի ժամանակ՝

«Կապի քո բըլբուլ լեզուդ՝ ի յահէն լինիս գու լեղակ.
Ո՞ւր են քո ամէն բաներն՝ հայերէն, մասալ ու առակ»⁵:

¹ Տե՛ս Մ. Արևիյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2-րդ, էջ 543:

² Դիվան, ԻԷ, 50 — 56 (էջ 376 — 377): Հմմտ. Բանաստեղծ., XXXIX, 88 — 97 (էջ 221—222):

³ Բանաստեղծություններ, էջ 237:

⁴ Դիվան, Ե, 86 (էջ 271): Հմմտ. Բանաստեղծ., II, 150 (էջ 37):

⁵ Դիվան, ԻԵ, 50—51 (368): Հմմտ. Բանաստեղծ., VII, 48—49 (էջ 58):

Այս տողերից հետևում է, որ նա գրել է նաև հայրեններ, մասալներ ու առականեր, այլ խոսքով՝ սիրո և ուրախության տաղեր: Հայտնի է սակայն, որ Ֆրիկի անունով մեզ հասած տաղերի մեջ այդպիսիները (եթե չհաշվենք «Վասն ի վերայ եղբայրասպանին»-ը) բացակայում են: Այս հանգամանքը ինքնին վկայում է, որ անվանի տաղասացի ստեղծագործություններից շատերը չեն պահպանվել կամ գուցե մասամբ դեռ չեն հայտնաբերվել, ուստի այդ ուղղությամբ աշխատանքները պետք է շարունակվեն:

Ամփոփելով Ֆրիկի ստեղծագործական կյանքի փուլերը որոշելու ուղղությամբ մեր ստացած արդյունքները, դալիս ենք հետևյալ եզրակացության.

Նրիտասարդական շրջանում Ֆրիկը գրել է սիրո և ուրախության հայրեններ, մասալներ ու առականեր, որոնք չեն հասել մեզ նրա անունով:

Իր ստեղծագործական կյանքի հաջորդ փուլում (շուրջ 1285—1295) Ֆրիկը աղքատանալով, զրկվելով տնից ու տեղից, ստեղծագործում է սոցիալական սուր բովանդակությամբ նշանավոր իր բանքերը («Ընդդէմ ֆալաքին», «Վասն Արդուն դանին և Բուղալին», «Վասն դալեհի և բրջի», «Գանգատ»), բացահայտելով ֆեոդալական հասարակության ներսում գոյություն ունեցող սոցիալական ու տնտեսական անհավասարությունը:

Այդ տաղերից հետո, նրա ծերության տարիների ստեղծագործություններում աստիճանաբար սկսում են իշխել աշխարհի ունայնության մասին տրամադրությունները, կրոնա-բարոյագիտական թեմաներն ու խրատները: Աստիճանաբար մեր հեղինակը սկսում է փառաբանել աստվածային արարչագործությունը, խոսել մեղքերի քավության ու ահեղ դատաստանի մասին և այլն:

* * *

Դրեթե բոլոր ուսումնասիրողները այն կարծիքն են հայտնել, որ իբր Ֆրիկն իր կյանքի մեծ մասում թափառաշրջիկ է եղել¹: Այս տարածված և սխալ կարծիքը այժմ պետք է վերանայի: Հաստատ կարելի է ասել, որ մինչև իր տնից ու տեղից զրկվելը նա թափառական չի եղել:

Շատերը, որոնց թվում բանասեր Տիրայրը և Ա. Աբրահամյանը, բանաստեղծի «Ֆրիկ» անունը աշխատել են բացատրել կապելով «Ֆրոփկ», «Ֆրոֆոփկ», «Ֆրոան», այսինքն՝ «պտտող, թափառող, դարձող» բառերի հետ²: «Ֆրիկ» անվան այս բացատրությունն անրնդունելի է ոչ միայն այն պատճառով, որ ինչպես ասացինք, մեր բանաստեղծը թափառաշրջիկի ցուպ է վերցրել իր ստեղծագործական կյանքի վերջին շրջանում, այլ նաև այն պատճառով, որ «Ֆրոտն», «Ֆրոֆոփկ» մակդիրները բոլոր բարբառներում էլ ունեն բացասական իմաստ և նշանակում են «խելքից, բարոյականությունից թեթև մարդ, աննպատակ թափառող, թեթևադիմ»:³ Ծիշտ է նկատել Ա. Հովհաննիսյանը, որ բանաստեղծը ոչ մի տեղ իրեն չի կոչում «Ֆոփկ», այլ միշտ՝ «Ֆրիկ»:

Սակայն նույնքան անհավանական է թվում բնկ. Ա. Հովհաննիսյանի

¹ Դիվան, Գննական ուսումնասիրություն, էջ 31: Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 10: Ա. Աբրահամյանի գրախոսականը, էջ 33:

² Դիվան, Գննական ուսումնասիրություն, էջ 34—95: Ա. Աբրահամյանի գրախոսականը, էջ 33:

«Ֆրիկ» անվան բացատրության նոր փորձը, ըստ որի բանաստեղծի անունը պետք է առաջացած լինի «Աֆրիկ» կամ «Էֆրիկ» անձնանունների սղումից¹։

Եթե իրապես «Ֆրիկ» անունը բանաստեղծի կեղծանունն է, ապա մենք կարծում ենք, որ ամենից հավանականը և ճիշտը Մ. Մկրյանի ենթադրությունն է, ըստ որի «Ֆրիկ» նշանակում է՝ «խանձված նորահաս ցորեն, նորահաս հասկերից պատրաստված բովածք»²։ Նույն այս ենթադրությունը կողմնակի կերպով արել է նաև բանասեր Տիրալըր³։ Շատ բարբառներում այդ բառը պահպանված է «Ֆերիկ» ձևով, իսկ Մալաթիայի բարբառում «Ֆրիկ» ձևով։ Նույն ձևով և իմաստով բառն օգտագործում է նաև Ամիրզոյաթը։ «Ֆրիկ, — ասում է նա, — որ է եղի ցորենն, որ այրեն ի կրակն և ուտեն»⁴։ Այս բացատրության որպես ապացույց կարող է ծառայել նաև Ֆրիկի իր մասին գրած ներքոհիշյալ տողը.

«Ո՛չ ծրլիմ, ո՛չ բուսանիմ, զերդ զադրնձած սերմ եմ գերիս»⁵։

Ֆրիկի ծննդավայրի մասին ուղղակի վկայություններ չկան։ Ուսումնասիրողները ելնելով բանաստեղծի լեզվի տվյալներից, նրա ծննդավայրի մասին արել են ենթադրություններ։ Բանասեր Տիրալըր ճգնել է «ապացույցը», որ Ֆրիկը իրը թե զարարադցի է։ Նրա հիմնական «ապացույցը» այն է, որ Ֆրիկի մոտ գործածված մի շարք բառեր կան նաև Ղարաբաղի բարբառում⁶։ Այս կապակցությամբ Ա. Հովհաննիսյանը արդեն իրավացի ու ճիշտ կերպով նշել է, որ «որևէ բարբառի կամ դրական լեզվի բնույթը որոշվում է ոչ թե նրա բառամթերքով, այլ նրա քերականության սիստեմով, իսկ այդ տեսակետից Ֆրիկի լեզուն սերտ մերձավորություն չի մատնում առհասարակ հայերենի արևելյան բարբառներից որևէ մեկի հետ», և որ «Ֆրիկի գրական լեզուն ավելի մոտ է արևմտահայ բարբառների ճյուղին»⁷։ Մեր կողմից նկատենք նաև, որ Ֆրիկի մոտ գործածված այն բառերը, որոնք բանասեր Տիրալըր համեմատել է Ղարաբաղի բարբառի հետ, կարելի է գտնել արևմտահայ գրեթե բոլոր բարբառներում։ Ավելին, համեմատված բառերի մեծ մասը նույնիսկ չունեն Ղարաբաղի բարբառի հնչումը։

Հակառակ Ֆրիկի լեզվի մասին հայտնած վերոհիշյալ ճիշտ դիտողություններ, Ա. Հովհաննիսյանը հնարավոր է համարել ենթադրել, որ Ֆրիկը եղել է անեցի։ Մենք Ֆրիկի տնեցի լինելու կամ չլինելու հարցի վրա չենք ուղում ծանրանալ, որովհետև ինքը՝ Ա. Հովհաննիսյանը, դպարով իր բերած փաստերի թուլությունը, դրում է. «Ֆրիկի անեցիությունը ավելի չէ, քան ենթադրություն, որ կարոտ է հավաստման»⁸։

¹ Ա. Հովհաննիսյան, *Նշված աշխատություններ*, էջ 111։

² «Հայ գրակ. պատմություն», գտագիրք միջնակարգ դպրոցների համար, գիրք Ա, Երևան, 1949, էջ 164։

³ Դիվան, *Քննական ուսումնասիրություն*, էջ 90։

⁴ Ամիրզոյաթ, *Անդիադ անպէտ, Վիեննա*, 1926, էջ 623։

⁵ Դիվան, Գ, 12 (էջ 264)։ Հմտ. Բանաստեղծ., 11, 16—17 (էջ 31)։

⁶ Դիվան, *Քննական ուսումնասիրություն*, էջ 34—35, 96—97, 129—139։

⁷ Ա. Հովհաննիսյան, *Նշված աշխատություններ*, էջ 117։

⁸ Նույն տեղում, էջ 116—117։

Ֆրիկը իր «Յաղագս փոշիմանովեան» տալում գրում է.

«Շատ մի դատեցայ, եղբայրք, ի Հարգայ ևս շատ մի տարի,
Ասցի, թէ իմ ջանօքս առնեմ մեծութիւն՝ առանց հրամանի»¹:

Ուսումնասիրողներից շատերը (Տիրալը, Ա. Ղանալանյան և Մ. Մկրյան) այստեղ հիշատակված «Հարգայ»-ն համարել են Կիլիկիայի պատմական Հարգա, այսինքն՝ այժմյան Հաջըն քաղաքը, որտեղ, ըստ նրանց, երկար տարիներ ապրել է Ֆրիկը կամ եկել է իր գրավ գրած որդուն որոնելիս²: Մ. Արեղյանը ճիշտ համարելով այդ բառի «Հարգայ» փոփոխակը, ընդհակառակը՝ կարծել է, որ դա Աղձնիքի նշանավոր կենտրոն Հազրան է³: Ա. Արրահամյանը, մերժելով նախորդ ուսումնասիրողների արած ենթադրությունները և նույնպես ճիշտ համարելով «Հազրա» փոփոխակը, գտնում է, որ «Հազրա» բառը հատուկ անուն չէ, այլ պարսկերեն «Հադրե» բառն է, որ նշանակում է՝ «ունայն, ապարդյուն»⁴: Ըստ Ա. Արրահամյանի, այս հատվածի առաջին երկու տողերը պարզապես նշանակում են՝ «Ես շատ տարիներ, եղբայր, ապարդյուն աշխատեցի, իդուր աշխատեցի»⁵:

Ա. Հովհաննիսյանը, հենվելով 1417 թվականին գրված մի հիշատակաբանի վրա, գտնում է, որ Ֆրիկի մոտ հիշատակված «Հարգայ»-ն ոչ թե Կիլիկիայի Հարգա քաղաքը կամ Աղձնիքի Հազրա կենտրոնն է, այլ Առանի «Հերգա» գավառը, որի կենտրոնն էր հանդիսանում Աղվանքի հին մայրաքաղաք Պարտավը կամ Բարդավը⁶: Միանգամայն ճիշտ է Ա. Հովհաննիսյանը ասելով, որ Ֆրիկը, մասաչիություն գործի հետ կապված, բաղմամբիվ անգամներ եղել է մոնղոլների ամառանոց-ձմեռանոցներում, այսինքն՝ Ալադաղի, Գեղարքունյաց լեռնայանցներում, Մուղանի գաշտավայրում և այլն:

Որ իսկապես Ֆրիկը եղել է Անդրկովկասում և հատկապես Աղվանքում ոչ միայն երևում է նրանից, որ նրա տաղերում գործածված են արևելահայ բարբառներին միայն հատուկ մի շարք բառեր ու դարձվածքներ, այլ նրա մոտ գործածված «առան» բառից: Այս բառը, որը Ղարաբաղի բարբառում նշանակում է բռնկողների ձմեռանոց, անշուշտ, առաջացած պետք է լինի «Առան» (=Աղվանք) երկրի անունից: Նույնիսկ կարծում ենք, որ Ֆրիկի համապատասխան հատվածում այս բառը հենց գործածված է «Առան» երկրի, այսինքն՝ այժմյան Սովետական Ազրբեջանի հարավային մասի իմաստով, որտեղ և գտնվում էր մոնղոլների ձմեռանոցը: Հետաքրքիր է նշել նաև, որ Ֆրիկը լավ ճանաչում է Անդրկովկասի և Կովկասի ժողովուրդներին: Իր տաղերում, տարբեր առիթներով, բացի հայերից ու վրացիներից, նա հիշատակում է նաև արխաղներին, դիլաղներին, օսերին, ալաններին և չերքեզներին:

Այսպիսով, պետք է ընդունել, որ «Հարգայ-Հարգա» տեղանվան կամ բառի մասին մինչև այժմ եղած բացատրություններից ամենահավանականը Ա. Հովհաննիսյանի բացատրությունն է:

¹ Գիվան, ԻԳ, 9—10 (էջ 362): Հմմտ. Բանաստեղծ., IX, 6—7 (էջ 42):

² Գիվան, Քննական ուսումնասիրություն, էջ 30—31, «Ֆրիկ», ժողովածու, էջ 99: Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 11:

³ Մ. Արեղյան. Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2-րդ, էջ 251:

⁴ Ա. Արրահամյանի գրախոսականը, էջ 35—36:

⁵ Ա. Հովհաննիսյան, նշված աշխատությունը, էջ 114—116:

Ֆրիկի տաղերից մի քանիսը հնարավորություն են տալիս որոշելու, թե բացի Անդրկովկասից ուրիշ ինչ վայրերում կամ երկրներում է եղել նա:

Իր տաղերից մեկում, խոսելով մահվան անողորմության մասին Ֆրիկը գրում է.

«Անողորմըն բաժանէ զնոր պրսակած հարսն ու փեսայ,
Զինչ եղաւ ի հրլաթանն ինքն Յովակիմ երեսնամեայ»¹:

Եթե այս տաղերը հետագա գրիչներից մեկի կողմից ավելացված չեն, ապա նշանակում է, որ մենք մի շատ արժեքավոր վկայություն ունենք այն մասին, որ Ֆրիկը եղել է Վանա լճի ափում գտնվող, այդ ժամանակ շատ նշանավոր և վաճառաշահ հրաբխաբան:

«Գեղեցիկ պատկերք ու հեր» տաղի խորագրում գրված է. «Անցաւ ի Տաճիկ ողվարքն և տեսաւ զոսկերս մեռելոցն այրուած յարևն և ասաց ողբ ի վերայ մահու՝ յաղագս զգուշանալոյ մարդկան»²: Ինչպես ճիշտ կերպով առաջին անգամ նկատել է Աս. Մնացականյանը, այս տաղի խորագրում տրված բացատրությունը վերաբերում է Ֆրիկին³: Դա նշանակում է, որ Ֆրիկը անցել է Պարսկաստանի այն մասերից, որտեղ զրադաշտական մեռելատներ են եղել, այսինքն՝ մեռելները չեն թաղվել, այլ թողնվել են բացօթյա:

Անկախ այս վկայությունից, կասկածից վեր է, որ Ֆրիկը իր ընկերակից մասասչիի հետ իրենց պարտամուրհակների գումարները ստանալու հույսով կամ այդ կապակցությամբ էմիրներին ու դիվանի պաշտոնյաներին դիմումներ կատարելու նպատակով, շատ հաճախ եղել է էլիանության մայրաքաղաք Թավրիզում: Ֆրիկի Պարսկաստանում լինելու որպես կողմնակի կարևոր աղանջույց կարող է հանդիսանալ նաև այն, որ մեր տաղասացը լավ է իմացել պարսկերեն լեզուն: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ Ֆրիկի տաղերում օգտագործված 164 օտար բառերից 110-ը պարսկերեն, 42-ը արաբերեն և 12-ը թուրք-մոնղոլերեն են: Ավելին. Ֆրիկը պարսկերեն մի շարք բառեր հայացրել է, ինչպես օրինակ, «անդիճել», «անշառափ», «անումեկ», «զենահար», «զենութիւն» և այլն:

Մեր կարծիքով անվիճելի պետք է համարել այն, որ Ֆրիկը ծնվել և իր կյանքի առաջին շրջանը ապրել է Արևմտյան Հայաստանի այն քաղաքներից մեկում, որի բարբառը կամ գրական լեզուն նման է եղել Կիլիկիայում գործածվող գրական լեզվին, և որը գտնվել է մոնղոլների տիրապետության տակ: Որա լավագույն ապացույցը այն է, որ Ֆրիկի բոլոր տաղերն էլ գրված են Կիլիկիայում գործածվող գրական լեզվին հատուկ բառերով, զարձակածքներով և քերականական ձևերով: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ Ֆրիկը լավ ծանոթ է նաև Միջագետքում և Սիրիայում ապրող ժողովուրդներին: Այդ ժողովուրդներից նա իր տաղերում հիշատակում է արաբներին, ասորիներին, բելերին, ֆուսնգ-խաչակիրներին («ֆուսնգ լատինացի»), հրեաներին:

Ֆրիկի ծննդավայրի կամ կենսավայրի հարցով զբաղվողները պետք է

¹ Դիվան, Թ, 11—12 (էջ 294): Հմմտ. Բանաստեղծ., V, տողատակում (էջ 45):

² Դիվան, Գ, (էջ 264): Հմմտ. Բանաստեղծ., VI, տողատակում (էջ 31):

³ Տե՛ս «Գրական թերթ», 1948, մայիսի 10-ի համարը:

ուշադրություն դարձնեն նաև նրա կատարած համեմատությունների, նրա գործածած առանձնահատուկ բառերի ու տերմինների վրա:

Այսպես օրինակ, Ֆրիկն իր տաղերում հաճախ ծովի հետ կապված համեմատություններ է կատարում՝

«Զինչ ըզծուկն յաղի ծովէս քաղցրը ջրիդ ի դէմ կու դամ»¹:

կամ՝

«Զիմ միտրս լողնորդ արի ու ի ծովու յատակն իջուցի,

Վասն այն մարգարտին համար, որ ծովու յատակն լինի»²:

և կամ՝

«Զինչ նաւն ի վերայ ծովուն՝ զօրն ի բուն ես կամ տատանած»³:

Բերված այս հատվածներից, ինչպես և մի շարք այլ տաղերից երևում է, որ Ֆրիկը շատ լավ ծանոթ է ծովի հետ: Արդյոք սա չի՞ նշանակում, որ նա բացի Վանա լճի շուրջ գտնվող քաղաքներից, եղել է նաև ծովափնյա այլ քաղաքներում:

Բանասեր Տիրայրը հիմք ընդունելով մի տաղի, իսկ Ա. Ղանալանյանը, Մ. Մկրյանը և Ա. Աբրահամյանը երկու տաղերի խորագրում գրված «Ի Ֆրիկ աշխարհականէ ասացեալ» կամ «Ֆրիկ ճարտար աշխարհականէ» հիշատակությունները, ճիշտ կերպով ենթադրել են, որ Ֆրիկը աշխարհական է եղել⁴: Սակայն նույն բանասեր Տիրայրը և Ա. Աբրահամյանը, մի քիչ հետո մոռանալով իրենց իսկ արած այս ճիշտ ենթադրությունը, ելնելով Ղ. Ալիշանի կողմից մի տաղի վերնագրից սխալ արտադրած «Ի վանս բանասիրած» խոսքերից, որը, ինչպես այժմ պարզված է, եղել է «Ի վարս բանայսիրաց», աշխատել են Ֆրիկին կապել Սյունիքում կամ Կիլիկիայում եղած «Բանասիրաց» կոչվող ինչ-որ վանքի հետ⁵: Մ. Աբեղյանը ընդհանրապես կասկածելի է համարել Ֆրիկի աշխարհական լինելը⁶:

Ֆրիկի սկզբում հարուստ լինելը, նրա կապը մասսաչիների հետ, նրա տանից ու տեղից դրկվելը, կին, դուստր և որդի ունենալը, խոր ծերության ժամանակ անօգնական մնալը այլևս ոչ մի կասկած չեն թողնում այն մասին, որ նա իրոք աշխարհական է եղել և ոչ մի վանքի հետ կապ չի ունեցել: Նրա տաղերում հաճախ հիշատակվող «շահ ու զենը», «տոկոսնին», «վաստակը», «շահենալը», «բարաթը», «դավթարը» և ասուտրի ու վաշխառության հետ կապված մյուս բառերն ու տերմինները ապացուցում են, որ նա ոչ միայն ծագումով եղել է քաղաքացի, այլև հանդիսացել է քաղաքային հարուստ, ունևոր դասի («մեծատունների») ներկայացուցիչներից մեկը:

¹ Դիվան, Գ, 14 (էջ 258): Հմմտ. Բանաստեղծ., X, 22—23 (էջ 61):

² Դիվան, ԻԴ, 53—56 (էջ 365): Հմմտ. Բանաստեղծ., IV, 50—53 (էջ 44):

³ Դիվան, ԻԹ, 35 (388): Հմմտ. Բանաստեղծ., XI, 34 (էջ 229):

⁴ Դիվան, Քննական ուսումնասիրություն, էջ 15: «Ֆրիկ», ժողովածու, էջ 99: Բանաստեղծ., էջ 9: Ա. Աբրահամյանի զրախոսականը, էջ 33—34:

⁵ Դիվան, Քննական ուսումնասիրություն, էջ 127—130: Ա. Աբրահամյանի զրախոսականը, էջ 35:

⁶ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2-րդ, 246—247 էջերի տողատակի ծանոթությունը:

«Դիվանի» մեջ մտած մի քանի տաղեր, սրունք վերագրված են Ֆրիկին՝ անտարակույս Ֆրիկին չեն պատկանում: Նախորդ ուսումնասիրողները և դրախոսողները արդեն միանգամայն ճիշտ կերպով ցույց են տվել, որ «Յիշէ զբանն աւետարանին» տաղի տնագլուխ տառերից «Յովասափ Մազազ» անունը կազմող առաջը պատկանում է Հովասափ Սեբաստացուն¹: Հակառակ «Դիվանը» կազմողի պնդումներին, ո՛չ լեզվի, ո՛չ ոճի, ո՛չ բառամթերքի և ո՛չ էլ բովանդակության տեսակետից Ֆրիկին չի պատկանում նաև «Ծրագ մարմնոյս է իմ խաւար» տողով սկսվող անանուն հեղինակի տաղը:

Հակառակ սրան, բանասեր Տիրայրը Ֆրիկի տաղերի շարքից դուրս է հանել և հավելվածում է հրատարակել անվանի բանաստեղծի գլուխ գործոցը հանդիսացող «Գանգատ»-ը, այն համարելով ոչ Ֆրիկինը: Այդ առթիվ նա գրում է. «Ֆրիկին վերագրված «Գանգատ», «Բան վիճման ընդ ամենազօրին Աստուծոյ» վերտառությամբ տաղը, մեր կարծիքով, Ֆրիկինը չէ, ինչպես համառ կերպով պնդվում է ամենքի կողմից և ամեն պատեհությամբ: Ավելին ևս. «Գանգատ»-ի հեղինակի անունն ևս, բարեբախտաբար ժամանակը պահպանել է մեզ համար: Այդ երգի հեղինակը հայտնի է թե ով է. — «Բարսեղ ոմն իմաստուն», որը, թվում է, թե շատ բան չէ գրած և կամ որից շատ բան չէ մնացած յուր անունով: Իր այս տեսակետն ապացուցելու համար բանասեր Տիրայրը հիմնականում նշում է երկու փաստ. ա) Ֆրիկը, որը սովորություն ունի տաղերում հիշատակելու իր անունը, այս տաղում իր անունը չի հիշատակել: Բ) «Գանգատ»-ի մի տարբերակի երկու զրչագիր ընդօրինակություններում որպես հեղինակ տաղամիջում նշված է ոմն Բարսեղի անունը²:

Բանասեր Տիրայրից դեռևս շատ առաջ Քուչակի «Դիվանի» առաջարկումն ունյն այս կարծիքը կասկածանքով հայտնել է նաև Ա. Չոպանյանը³:

Ֆրիկի «Դիվանի» հրատարակության առթիվ գրած իր գրախոսականում Ա. Արրահամյանը գրում է. «Գանգատ»-ը ժողովրդի մեջ, ժամանակի մտավորական առաջագեմ շրջաններում տարածված և գնահատված մի երկ է եղել, այն խմբագրվել և մշակվել է մի քանի անգամ: Համենայն դեպս, նրա մշակող հեղինակներից երեքը, անուններով մեզ հայտնի են՝ Ֆրիկը, Բարսեղը, և Հովհաննես Սարկավագը⁴: Ըստ Ա. Արրահամյանի դուրս է գալիս, որ Ֆրիկը այս երկի հեղինակը չէ, այլ նրա մշակողներից մեկը միայն:

1937 թվականին լույս տեսած «Ֆրիկ» վերնագրով ժողովածուի մեջ Բարսեղի անունով հայտնի «Գանգատ»-ի տարբերակի հրատարակության առթիվ տողատակի ծանոթության մեջ կասկած է հայտնված, թե արդյոք Բարսեղը նույն ինքը Ֆրիկը չէ⁵:

Այս վերջինի առթիվ դեռևս 1938 թվականին մի հոդված էինք գրել, որտեղ ցույց էինք տվել, որ «Գանգատ»-ի հեղինակը Ֆրիկն է, իսկ Բարսեղը՝ սովորական մի բանագող⁶: Հասկանալի է, որ այժմ մենք ստիպված ենք ավելի ման-

¹ Գ. Հովսեփյան, «Հովասափ Սեբաստացի», տե՛ս «Արարատ», 1918, էջ 274: Ա. Արրահամյանի գրախոսությունը, էջ 33:

² Դիվան, Քննական ուսումնասիրություն, էջ 108:

³ Քուչակ, Դիվան, Փարիզ, 1902, 12 էջի ծանոթությունը:

⁴ Ա. Արրահամյանի գրախոսականը, էջ 37:

⁵ Տե՛ս «Ֆրիկ», ժողովածու, էջ 150 - 151:

⁶ Տե՛ս մեր հոդվածը Ֆրիկի «Գանգատ»-ի երկու վարիանտների մասին, «Գրական թերթ», 1938, հոկտեմբերի 15-ի համարում:

բամասն անդրադառնալ այդ հարցին, որովհետև, ինչպես տեսանք, դեռ կան բանասերներ, որոնք Ֆրիկին չեն համարում այդ ստեղծագործությունը, կամ Ֆրիկին համարում են նրա վերամշակողներից մեկը:

«Գանդատ»-ը մեզ հասել է երեք տարբերակներով և երեք տարբեր հեղինակների՝ Ֆրիկի, Բարսեղի և Հովհաննես Սարկավազի անուններով:

Առաջին տարբերակը գրչագիր ընդօրինակություններում ունի «Բան ի Ֆրիկ գրքոյն» կամ «Բանք ի Ֆրիկ գրոցն» վերնագրերը, երկրորդը՝ «Բանք վիճման յումեմնէ իմաստնոյ ընդ ամենագորին Աստուծոյ» կամ «Բարսեղի ումեմն մարդոյ կոիւ եղեալ ընդ Աստուծոյ, կու մեղադրէ և յետոյ...» վերնագրերը, իսկ երրորդը՝ «Սարկավազ վարդապետի ասացեալ մարտ ընդ Աստուած» կամ «Գանգատ առ Քրիստոս յաղագս տարբեր վիճակի մեծատան և աղքատին» վերնագրերը: Բն՝ առաջին և թե՛ երրորդ տարբերակի տաղամիջում ոչ մի հեղինակի անուն հիշատակված չէ, իսկ երկրորդ տարբերակի տաղամիջում որպես հեղինակ նշված է Բարսեղը:

«Ամ, ցոյց թէ ո՞ր մ՞ է պիտանի,
Որ Բարսեղս այլ գիտուն լինի»¹:

Բոլոր ուսումնասիրողներն էլ հիշա կերպով նկատել են, որ «Գանգատ»-ի մեզ հասած բոլոր տարբերակները ոչ թե առանձին ստեղծագործություններ են, այլ միևնույն ստեղծագործության տարբեր վերամշակումներ:

Որպեսզի մենք պարզենք, թե ով է «Գանգատ»-ի իսկական հեղինակը և երեք տարբերակներից որն է բուն բնագիրը, նախ անհրաժեշտ է որոշել այդ տարբերակներից յուրաքանչյուրի գրությունը կամ վերամշակման մոտավոր ժամանակը: Քանի որ տարբերակներում ուղղակի վկայություններ չկան նրանց գրության ժամանակի մասին, մեզ մնում է այդ հարցը որոշել տարբերակներում գործածված հատուկ անունների, տերմինների և բառերի օգնությամբ:

Առաջին կամ Ֆրիկի անունով մեզ հայտնի տարբերակի հեղինակը, կասկածելով և զարմանալով, թե ինչպես մեկ Աղամից և Եվայից բազմաթիվ ժողովուրդներ են առաջացել, որոնք տարբեր լեզուներով են խոսում, հիշատակում է հետևյալ ժողովուրդներին՝ «Հայ», «Վրացի», «Տաճիկ», «Ասորի», «Ծըհուդ Երալեցի», «Արար Հագարացի», «Ալան Արևորդի», «Թովիչ Ափխազի», «Քուրդ Քանանացի», «Թութար Թորգոմացի», «Մուղալ Խրթալեցի», «Ջաղաթայ Արմորդլիցի», «Ֆուսնգ Լատինացի», «Վենետ», «Ջենեցի», «Հոսովմ է Ֆունացի», «Ուռուս», «Հոնացի» և «Դաղմատ Սպանիացի»²:

Երկրորդ, կամ Բարսեղի անունով հայտնի տարբերակում հիշատակված են հետևյալ ժողովուրդները՝ «Հայ», «Ասորի», «Ջհուդ», «Վրացի», «Քուրդ Քանանացի», «ԵԱրապ Ասորեցի», «Ալան Արևելքցի» և «Ֆուսնգ Արևմտցի»³:

Երրորդ, կամ Հովհաննես Սարկավազի անունով հայտնի տարբերակում վերահիշյալ ժողովուրդներից և ոչ մեկը հիշատակված չէ:

Առաջին և երկրորդ տարբերակների համեմատությունից պարզվում է նախ, որ երկրորդ տարբերակում բոլորովին հիշատակված չեն առաջինի «Տաճիկ»,

¹ Ֆրիկ. Բանաստեղծություններ, էջ 241:

² Նույն տեղում, XL1, 22—35 (էջ 232—233):

³ Նույն տեղում, էջ 240:

«Ափխազ», «Թաթար Թորգոմացի», «Մուղալ խրթայեցի», «Ջաղաթայ Սրմբրդըն-դի», «Վենետ», «Ջենեցի», «Հոռովմ է Յունացի», «Ուոուս», «Հոնացի» և «Դաղմատ Սպանիացի» հատուկ անունները: Այնուհետև առաջին տարբերակում գործածված «Ճըհուզ Երրայեցի», «Արաբ Հագարացի», «Ալան Արևորդի» և «Ֆուանդ Լատինացի» ձևերի փոխարեն երկրորդ տարբերակում գործածված են «Ջհուզ», «յԱրապ Ասորեցի», «Ալան Արևելքցի» և «Ֆուանդ Արևմտցի» ձևերը:

Վզբից և եթ նշենք, որ մոնղոլ-թուրքական տիրապետության ժամանակաշրջանի պատմության լավատեղյակ ամեն ոք անմիջապես կարող է նկատել, որ առաջին տարբերակի հեղինակը ապրել է 13—14-րդ դարերում, քանի որ այնտեղ հիշատակված են այնպիսի հատուկ անուններ, որոնք կարող էր իմանալ միայն այդ դարերում ապրողը կամ այդ դարաշրջանի սկզբնաղբյուրները ուշադիր կերպով ուսումնասիրողը: Խիստ ուշագրավ են հատկապես այստեղ հիշատակված «Թաթար Թորգոմացի», «Մուղալ խրթայեցի» և «Ջաղաթայ Սրմբրդըն-դի» անունները:

Պարզ է, որ առաջին տարբերակի հեղինակը «Թաթար Թորգոմացի» ասելով հասկացել է թաթարներին: Սակայն ինչու է նա թաթարներին «Թորգոմացի» անվանել: Այս գաղտնիքը պարզվում է 13-րդ դարի հայկական սկզբնաղբյուրների տվյալներով: Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության հիշատակարանի մեջ կարգում ենք.

«Եւ ասէ զնոսա (թաթարներին) սուրբ Ներսէս ի մնացորդացն Հագարու և ասորիք ասեն զսոսա Թորգոմեանս. յայտնի է խառնեալ ազգին Գովգայ, որ ի Թորգոմայ ընդ զարմն Հագարու»¹:

Գրիգոր Ակնեբցին, որի միակ աղբյուրն այդ հարցում վերահիշյալ հիշատակարանն է եղել, գրում է.

«...Եւ անուանեցաւ Թաթար, որ ասի սուր և թեթեւ: Իսկ սուրբ Ներսէս ասէ զսա ի մնացորդացն Հագարու, խառնեալ ընդ ազգին Գովգայ, որ ի Թորգոմայ»²:

Բերված վկայություններից հետևում է, որ հատկապես ասորի հոգևորականները թաթարների ծագումը կապելով աստվածաշնչի տոհմաբանության հետ, նրանց սերված են համարել Նոյի թոռ Թորգոմից: Ահա թե ինչու առաջին տարբերակի հեղինակը թաթարներին «Թորգոմացի» է անվանում: Այս փաստը ինքնին ցույց է տալիս, որ այդ հեղինակը ոչ միայն դիտի թաթարների ծագման մասին գոյություն ունեցող այս բացատրությունը, այլև ինքը ապրել է 13—14-րդ դարերում:

Ուշագրավ է, որ ժամանակակից արևելահայ պատմիչներից և ոչ մեկը ոչ մի վկայություն չունի թաթարների՝ Թորգոմի սերնդից սերված լինելու մասին, այլ զրա մասին վկայում են միայն Կիրիլիայում գրված երկու սկզբնաղբյուրներ, և այն էլ ասորիների տված բացատրության հիման վրա: Այս հանգամանքը

¹ Տե՛ս Գրիգոր Ակնեբցի (Մաղաքիայ Աբեղայ), «Պատմութիւն վասն Ազգին Նետղաց», Պետերբուրգ, 1871, հավելվածում, էջ 57:

² Նույն տեղում, էջ 3:

ցույց է տալիս, որ թաթարների ծագման մասին եղած այս բացատրությունը առավելապես տարածված է եղել ասորիների շրջանում և Կիլիկիայում: Այս կողմնակի փաստը արդյոք ցույց չի տալիս, որ առաջին տարբերակի հեղինակը, այսինքն՝ Ֆրիկը մի առ ժամանակ ապրել է նաև ասորաբնակ հայաշատ քաղաքներից (Մալաթիա, Մուֆարդին, Ամիթ, Եղեսիա և այլն) մեկում կամ Կիլիկիայում:

Ժամանակակից սկզբնաղբյուրներից երևում է, որ «Մուղալ» անունը նույն «Մոնղոլ-թաթար» անվան ժողովրդական ձևերից մեկն է՝ եղել, որպես «մոնղոլ» անվան մի տարբերակ: Ստեփաննոս Որբելյանը խոսելով թաթարների գեպի Հայաստան կատարած արշավանքի մասին, վկայում է.

«Իսկ յետ մեռաւսան ամի վարթոյց Տէրն արեւելից զԱղզն Եւտողաց, որ Մուղալք կոչէին, և ըստ գեղջկացն թաթարք, որ ի Չին և ի Մաշին աշխարհէ, անդր քան զԽաթայստան՝ անաստուածք և անօրէնք»¹:

Դժվար չէ նկատել, որ այս վկայության մեջ հիշված «Խաթայստան»-ը «Գանգատ»-ի առաջին տարբերակում «Մուղալ» անվան հետ նշված «Խրթայ»-ը, կամ այլ սկզբնաղբյուրներում հաճախ հիշատակվող «Խիթայ» կամ «Խաթայ» երկիրն է: Հնում այսպես էր կոչվում Չինաստանի հյուսիսային մասը և նրա շուրջը գտնվող տերիտորիան, որտեղ ապրում էին մոնղոլական բազմաթիվ ցեղեր: Ռուսերեն «Китай—Չինաստան» աշխարհագրական անունը նույնպես առաջացել է այդ երկրի անունից: «Գանգատ»-ի առաջին տարբերակի հեղինակը «Մուղալ Խրթայեցի» ասելով, անկասկած նկատի ունի «Խիթայ-Խաթայ» երկրում ապրող մոնղոլներին:

Վենետիկցի նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն հայտնում է, որ Խաթայում (Cataya) կային մեծ թվով քրիստոնյաներ, կապալաշտներ և մուսուլմաններ²: Այս կապակցությամբ խիստ ուշադրավ է նշել, որ Ֆրիկը իր «Վասն անմիաբանութեան քրիստոնէից» բանքում «մուղալներին» նույնպես հիշատակում է քրիստոնյաների շարքում:

Պատմությունից հայտնի է, որ դեռևս մոնղոլական արշավանքների ժամանակ նվաճված երկրները որպես ուլուսներ բաժանվում են Չինգիզ խանի որդիների միջև: Այդպիսի ուլուսներից մեկն էր Չինգիզ խանի երրորդ որդու՝ Ջաղաթայի ուլուսը, որը հետագայում դառնում է ինքնուրույն մի պետություն: Այս պետության սահմանների մեջ էր մտնում ամբողջ Միջին Ասիան և նրա մայրաքաղաքն էր հանդիսանում Սամարղանդը:

Այս բացատրությունից հետո ընթերցողի համար պարզ է, որ «Գանգատ»-ի առաջին տարբերակի հեղինակը «Ջաղաթայ Սրմբրդընդի» անվան տակ հիշատակել է Ջաղաթայի պետության բնակիչներին:

Այսպիսով, «Մուղալ Խրթայեցի» և «Ջաղաթայ Սրմբրդընդի» հատուկ անունների դործածությունը նույնպես ապացույց է այն բանի, որ առաջին տարբերակի հեղինակը ապրել է 13—14-րդ դարերում, որովհետև ոչ մոնղոլներից առաջ և ոչ էլ նրանցից հետո ապրող հեղինակը չէր կարող իմանալ այդ հատուկ անունները:

¹ Ստ. Օրբելյան, էջ 400:

² Марко Поло, Путешествие, Ленинград, 1940, էջ 158:

Արդ ինչսփ բացատրել, որ երկրորդ տարրերակի հեղինակը, կամ Բարսեղը, չի հիշատակել քննարկված հատուկ անուններից և ոչ մեկը: Դա պարզապես պետք է բացատրել նրանով, որ Բարսեղը, լինելով ուշ ժամանակաշրջանում ապրած մարդ, «Գանդատ»-ի բնագրի հիման վրա իր տարրերակի վերամշակման կամ բանագործության ժամանակ, չհասկանալով այդ հատուկ անունների նշանակությունը, դուրս է գցել դրանք:

Մեր քննարկած հարցի տեսակետից խիստ ուշագրավ են նաև մի կողմից առաջին տարրերակում գործածված «Ֆուանդ կատինացի» և «Արար Հագարացի», իսկ մյուս կողմից երկրորդ տարրերակում սրանց փոխարեն գործածված «Ֆուանդ Արևմտցի» և «յԱրապ Ասորեցի» արտահայտությունները:

12—14-րդ դարերի հայկական, վրացական, պարսկական և ասորական սկզբնաղբյուրներից երևում է, որ այդ դարերում «Ֆրանդ» կամ «Ֆուանդ» անվան տակ Մերձավոր Արևելքում ոչ միայն հասկանում էին ընդհանրապես եվրոպացիներին, այլև այստեղ բնակություն հաստատած խաչակիրներին:

Ինչպես հայտնի է, խաչակրաց արշավանքների հետևանքով Երուսաղեմում, Անտիոքում, Աքքեայում և Մերձավոր Արևելքի այլ շրջաններում խաչակիրները ոտնուտն են իրենց իշխանությունները: Հայտնի է նաև, որ այդ իշխանություններում բնակություն հաստատած խաչակիր եվրոպացիները անվանվում էին «լատիններ»: Այս իշխանությունները 13-րդ դարի վերջում նվաճվեցին եղիպտական մամլուքների կողմից, իսկ այս վայրերում բնակություն հաստատած խաչակիրները կամ վերադարձան Արևմտյան Եվրոպա, կամ ձուլվեցին տեղական ժողովուրդների հետ: Արդեն 15-րդ դարում Մերձավոր Արևելքում չկային «Ֆուանդ»—խաչակիրներ:

Այս համառոտ տեղեկանքից հետո դժվար չէ նկատել, որ եթե «Գանդատ»-ի առաջին տարրերակում «Ֆուանդ կատինացի» անվան տակ հիշատակված են Մերձավոր Արևելքի լատինական իշխանությունների «Ֆուանդ-խաչակիրները», ապա երկրորդ տարրերակում ընդհակառակը՝ «Ֆուանդ-Արևմտցի» անվան տակ մատնանշված են ընդհանրապես եվրոպացիները և մասնավորապես ֆրանսիացիները:

Ինչով բացատրել Բարսեղի կողմից «կատինացի» բառը «Արևմտցի» բառով փոխարինելը: Դա պարզապես կրկին պիտի բացատրել նրանով, որ Բարսեղը չհասկանալով «կատինացի» բառի այստեղ գործածված իմաստը, «ուղղել» է այն և դրա փոխարեն դրել է «Արևմտցի», դրանով իսկ ուղենալով ցույց տալ, որ ֆրանկներն ապրում են արևմուտքում: Այս «ուղղումը» ինքնին ցույց է տալիս, որ Բարսեղը ամենաշուտը 15—16-րդ դարերում ապրած մարդ է:

Առաջին տարրերակում արարները «Հագարացի» են անվանված, որովհետև Մենդոց գրքի մեկնիչները արարներին սերված են համարել Արրահամ նահապետի աղախին Հագարից: Դրա համար էլ 7-րդ դարի երկրորդ կեսից սկսած մինչև 15-րդ դարի գրեթե բոլոր հայ պատմիչները արարներին շատ հաճախ անվանում են «Հագարացի»: 15-րդ դարից սկսած արաբներին տրվող այս անվանը հայ մատենագրության մեջ գրեթե չենք հանդիպում, որովհետև արարների քաղաքական դերը և կշիռը խիստ ընկել էր Մերձավոր Արևելքում:

Բարսեղը իր տարրերակի վերամշակման ժամանակ պարզապես չհասկանալով «Հագարացի» տերմինի իմաստը և կարծելով, որ «Գանդատ»-ի հեղինակը սխալ է նշել արաբների բնակության վայրը, «ուղղել» է նաև այդ անունը և դրա փոխարեն գրել «յԱրապ Ասորեցի», դրանով ուղենալով ցույց տալ, որ

արարները բնակվում են Ասորիքում: «Հազարացի» տերմինի նշանակությունը ՀՀասկանալի և արաբների բնակության վայրը Ասորիքը ցույց տալը ինքնին կրկին անգամ ապացուցում է, որ Բարսեղը ամենաշուտը 15—16-րդ դարերում ապրած մարդ է:

13—14-րդ դարերի հետ են կապված առաջին տարրերակում «Վենեա» և «Ջենեցի» անվան տակ հիշատակված վենետիկցիներն ու ջենովացիները, որոնք այս ժամանակ ոչ միայն հաճախ լինում էին Մերձավոր Արևելքի վաճառաշահ քաղաքներում, այլև այդ քաղաքներից շատերում ունեին իրենց թաղամասերը, դատարանները, հյուպատոսական և նոտարական գրասենյակները:

Միջնադարյան մեր պատմիչները «Հոռովմ», «Հոռովոց երկիր» ասելով ոչ թե հասկանում էին Հոռմը, այլ հույներին և Բյուզանդական կայսրությունը: Արար և պարսիկ պատմիչները ևս Բյուզանդիան կամ Փոքր Ասիայի արևմտյան մասը անվանում էին «Ռում» — «Ռումի երկիր»: Նույն այս իմաստով է գործածված նաև «Գանդատ»-ի առաջին տարրերակում «Հոռովմ է Յունացի» արտահայտությունը:

Առաջին տարրերակում «Ռումա» ձևով հիշատակված են ուսաները, իսկ երկրորդ տարրերակում ուսաների մասին ոչ մի հիշատակություն չկա: Այս փաստից ելնելով գուցե ընթերցողները տարակուսանքի մեջ մնան, թե ինչպես 13—14-րդ դարերում ապրող հեղինակը գիտի և հիշատակել է ուսաներին, իսկ 15—16-րդ դարերում ապրող հեղինակը չի հիշատակել նրանց: Արդյոք սա ապացույց չէ՞ այն բանի, որ երկրորդ տարրերակը ավելի հին է, քան առաջինը: Իհարկե ոչ:

Մինչև մոնղոլական արշավանքները ուսաները շատ քիչ էին հայտնի Մերձավոր Արևելքում: Սակայն այդ արշավանքներից հետո և հատկապես 13—14-րդ դարերում Մերձավոր Արևելքի ժողովուրդները, որոնց թվում և հայերը բավական տեղեկություններ են ստանում ուսաների մասին: Դա բացատրվում է նրանով, որ ուսա ժողովուրդը նույնպես բնակ էր մոնղոլ-թաթարական ծանր լծի տակ: Այս դարերում մոնղոլ կեղեքիչները գերեզմարած կամ պարտքի դիմաց ստրկացրած տասնյակ հազարավոր ուսաների բերում էին Մերձավոր Արևելք՝ վաճառելու համար:

Ֆրիկը իր տաղերում երկու անգամ ևս հիշում է ուսաներին:

«Շատ մի ծառայ՝ Ղըփչաղ և Ըռուա,
ժողովում բարիք տուն և ի դուրս»¹:

Այս տողներում Ֆրիկը ուղում է ասել, որ ինքը ցանկացել է ունենալ շատ դիչաղ և ուսա ստրուկներ: Իսկ «Վասն անմիաբանության քրիստոնէից» քերթվածքում Ֆրիկը մեղադրում է ուսաներին, այն բանի համար, որ նրանք «Զիւրեանց դաւակըն կու ծախեն»² տեղյակ չլինելով, որ ոչ թե ուսաներն էին վաճառում իրենց զավակներին, այլ թաթարներն էին ուսա երեխաների բռնություններ հափշտակում չվճարված հարկերի դիմաց:

Ա. Աբրահամյանը գտնում է, որ «Գանդատ»-ի մշակողներից մեկը հան-

¹ Գիվան, ԺԳ, 12—13 (էջ 329): Հմմտ. Բանաստեղծ., XV, 10—11 (էջ 92):

² Գիվան, 2, 13 (էջ 274):

ղիսացած Բարսեղը կարող է լինել Կիլիկիայի խորին կոշվող անապատի գրիչ Բարսեղ քահանան, որից մեղ է հասել մի շափածո հիշատակարան, ուր ծաղրոված են Սմբատ թափավորը (1296—1298) և Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսը¹։ Ա. Աբրահամյանի այս ենթադրությունը անհիմն է և սխալ։ Բարսեղի անունով մեղ հասած տարբերակի և Բարսեղ քահանայի շափածո հիշատակարանի ամենաթեթև համեմատումն իսկ այդպիսի ենթադրության ոչ մի հիմք չի տալիս, քանի որ առաջինը գրված է միջին հայերենով, իսկ երկրորդը՝ քիչ թե շատ կանոնավոր գրաբարով։ Բացի այդ, Կիլիկիայում ապրող հեղինակը չէր կարող խոսել եկեղեցիների մասսայական քանդումների և մզկիթների կառուցման մասին։

Երկրորդ տարբերակի ուշ ժամանակ կատարված վերամշակում լինելու ապացուցող այլ փաստեր էլ կան, բայց մենք բավականանում ենք այսքանով։

Մեր կատարած քննությունից հետո անվիճելի կերպով ապացուցված ենք համարում՝

ա) «Գանդատ»-ի առաջին տարբերակը, որն ունի «Բան ի Ֆրիկ գրքոյն» կամ «Բանք ի Ֆրիկ գրոցն» խորագրերը, գրված է 13—14-րդ դարերում և հանդիսանում է այդ տաղի բնագիրը։

բ) «Գանդատ»-ի երկրորդ տարբերակը վերամշակված է բնագրի հիման վրա ոմն Բարսեղի կողմից, ամենաշուտը 16-րդ դարի սկզբում։

գ) Կիլիկիայի խորին անապատի գրիչ Բարսեղ քահանան ոչ մի կապ չունի «Գանդատ»-ը վերամշակող Բարսեղի հետ։

Անցնելով երրորդ, կամ Հովհաննես Սարկավազի անունով մեղ հասած «Գանդատ»-ի տարբերակի քննությանը սկզբից ևեթ նշենք, որ այս տարբերակը ավելի ուշ ժամանակի վերամշակում է և վերամշակված է ոչ թե բնագրից, այլ Բարսեղի վերամշակած տարբերակից, որովհետև այն բոլոր հավելումները, կրճատումներն ու փոփոխությունները, որոնք կան Բարսեղի մոտ՝ կան նաև այստեղ։

Ահա մի քանի փաստեր, որոնք ապացուցում են այս պարզ իրողությունը։ Մահմեդականների կողմից աշխարհը տիրապետված լինելու մասին Բարսեղը իր տարբերակի մեջ ավելացրել է այսպիսի տողեր.

«Ջերկիր տվել ես Մահմէտի
Եւ զկէս երկրի՝ սաղանայի.
Յորեկն ճորտ եմք Մահմէտի
Գիշերն՝ խաբած սատանայի...
Որ ոչ ունիմք դաշտ փախըստի,
Ոչ քարանձաւս ապաւինի,
Ջի պատեալ են շուրջանակի
Սպանող գազանք և վայրենի»²։

Բանաստեղծության այս մասը, վերամշակելով յուրովի, պահպանել է նաև երրորդ տարբերակի հեղինակ Հովհաննես Սարկավազը։

¹ Ա. Աբրահամյան, նշված գրախոսականը, էջ 37—38։

² Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 241։

«Յերկիրս տուեր ես Մահմէդի
 և կէս երկիր սաղանայի...
 և քրիստոնեայք երևունի
 Չունին ինչ դաշտ անդաստանի
 Ոչ քարանձաւ ապաւինի:
 Բոլոր պատեալ շուրջանակի
 Սպանող գազանք երէ վայրի»¹:

Կամ նույն Բարսեղի կողմից ավելացված՝

«Մէկին բերդեր և քաղքրնի,
 Մէկն յօթնհաւ մի կարօտի»²:

տողերի դիմաց երրորդը ունի՝

«Մէկին բերդեր և քաղքրնի,
 Միոյն ո՛չ տուն կայ, ո՛չ տեղի»³:

Բնագրի «պառաւն ապրի», «պապանց պարոնորդի», «դեկան ոսկի», «ատլաս և զըրմզի» և «պետաւ ձի» դարձվածքների փոխարեն թե՛ երկրորդ և թե՛ երրորդ տարբերակներն ունեն «պառաւն ժրի», «պապք արքունի», «կապիճ ոսկի», «ատլաս մըղրպի» և «տաճիկ ձի» դարձվածքները:

Բերված օրինակները, որոնց թիվը կարելի է տասնյակների հասցնել, համոզում են, որ երրորդ տարբերակը վերամշակված է երկրորդի հիման վրա, այլ կերպ ասած, երրորդ տարբերակը վերամշակվածի վերամշակվածն է:

Երրորդ տարբերակում ոչ մի հետք չկա, որ հիմք տար ենթադրելու, թե այս տարբերակի վերամշակողը ծանոթ է եղել «Գանդատ»-ի բնագրին կամ երկրորդ տարբերակը վերամշակվել է երրորդի հիման վրա, որովհետև ա) Բարսեղի կողմից բնագրից դուրս գցված մասերից և ոչ մի տող չկա երրորդ տարբերակում. բ) Բնագրում հիշված ժողովուրդներից ոչ մեկը հիշատակված չէ երրորդ տարբերակում, մինչդեռ նրանցից մի քանիսը հիշված են երկրորդի մեջ. գ) Երկրորդ տարբերակը ավելի հարազատ է բնագրին, քան երրորդը և այլն:

Որ իսկապես այս տարբերակը ուշ ժամանակաշրջանի վերամշակում է, երևում է նաև գրչագիր բնագրինակութուններից մեկում պահպանված ներքոհիշյալ երկտողից, որի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Մ. Մկրյանը⁴:

«ՋՀայս և Սամբօլ տուիր թրքի
 և զգժոխքն սաղանայի»⁵:

Ինչպես արդեն ճիշտ կերպով նկատել է Ա. Աբրահամյանը, այս տարբերակի վերամշակող Հովհաննես Սարկավազը ոչ մի կապ չունի 12-րդ դարի նշա-

¹ Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 247—248:

² Նույն տեղում, էջ 243:

³ Նույն տեղում, էջ 251:

⁴ Նույն տեղում, էջ 16:

⁵ Նույն տեղում, 247 էջի տողատակում:

նաւոր զիտնական, բանաստեղծ Հովհաննէս Սարկավագի հետ, «որովհետեւ նրա լեզուն, ոճը, շարադրութեան եղանակը, բանաստեղծութեան ձեւը միանգամայն այլ են»¹:

«Գանդատ»-ի բնագիրը անվիճելիորեն 13—14-րդ դարերում գրված լինելը ապացուցելուց հետո, անհրաժեշտ է պարզել, թե ում է պատկանում այս նշանավոր տաղը:

Առանց ամենափոքր իսկ կասկածի, անվիճելի և անառարկելի կերպով գտնում ենք, որ «Գանդատ»-ը հանդիսանում է Ֆրիկի ստեղծագործությունը: Սրան որպէս հիմք է ծառայում ոչ միայն այն, որ տաղը գրված է 13—14-րդ դարերում և բնագիր տեքստը գրչադիր ընդօրինակություններում ունի «Բանի Ֆրիկի դրոցն» կամ «Բանքի Ֆրիկի դրոցն» խորագրերը, այլև տաղի լեզուն, ոճը, բանաստեղծութեան ձեւը, տաղում գործածված հատուկ անուններն ու տերմինները, և որ կարևորն է տաղի բովանդակությունը:

«Գանդատ»-ի և Ֆրիկի մյուս ստեղծագործությունների լեզուն, ոճական դարձվածքները, բանաստեղծութեան ձեւը այնքան նման են իրար, որ նույնիսկ մանրամասն համեմատումների ոչ մի կարիք չի զգացվում. ընթերցողը ինքը շատ հեշտությամբ կարող է համոզվել դրանում: Նշենք միայն, որ Ֆրիկի նախասիրած բառերից և դարձվածքներից այս տաղում գործածված են «գեմ», «խոտերի», «խանձ», «չարարաք», «թաւալի», «մուրող», «դեկան», «թափել», «դովլաթ», «հանց», «հարկիք», «անհարկի», «զրեհ», «հարամ», «հալալ», «այիպ», «ադտեղի», «ախտերես», «նեաթ», «փող պղնձի», «բորիկ և անվարտի», «արդար և իրաւ դատաւոր», «կեանքը կարճի», «շնորհ խօսից կարգի», «անուշ խօսի» և այլն:

Մեր քննության տեսակետից ուշագրավ է, որ «Գանդատ»-ի մեջ հիշատակված ժողովուրդներից մեծ մասը հիշատակված են նաև Ֆրիկի այլ տաղերում: Դրանցից են՝ «Հայ», «Վրացի», «Ասորի», «Հոռոմ», «Ֆռանգ», «Ուտու», «Տաճիկ», «Դհուդ», «Հոնացի», «Ղվիչաղ», «Թաթար», «Մուղալ» ժողովուրդները:

Բանասեր Տիրայրը, ինչպէս տեսանք, «Գանդատ»-ը Ֆրիկինը չի համարել հիմնականում ելնելով նրանից, որ նրա մեջ Ֆրիկի անունը հիշատակված չէ: Եթե նա հետևողական լիներ, Ֆրիկինը չպետք է համարեր նաև «Ընդդէմ ֆալաքին» և «Վասն դալեհի և բրջի» տաղերը, որովհետև սրանց մեջ նույնպէս հիշատակված չենք գտնում Ֆրիկի անունը: Պարզ է, որ տաղամիջում հեղինակի անունը հիշատակված լինելով կամ չլինելով անհնար է որոշել որեւէ ստեղծագործութեան հեղինակային պատկանելիության հարցը:

Որ իսկապէս «Գանդատ»-ը Ֆրիկի ստեղծագործությունն է, ակնհայտ երևում է նրանից, որ այստեղ արծարծված մտքերը գտնում ենք նաև Ֆրիկի մյուս տաղերի, հատկապէս նրա «Վասն դալեհի և բրջի» և «Ընդդէմ ֆալաքին» ստեղծագործությունների մեջ:

Ինչպէս հալտնի է, «Գանդատ»-ի հեղինակը վեճի մեջ մանկելով ստեղծահետ, նշում է ֆեոդալական հասարակութեան մեջ գոյություն ունեցող սոցիալա-տնտեսական խորը անհավասարությունը: Նա, խոսքն ուղղելով աստծուն, դրում է.

«Եւ այժմ էր բան քո հրամանի,
Արդար, իրաւ դատաւորի:

¹ Ա. Արքատոյան. նշված գրախոսականը, էջ 27:

Որ մէկն ապրի տասն տարի,
 Մէկն հարիւր այլ աւելի...
 Մէկն ի պապանց պարոնորդի,
 Մէկն ի հարանց մուրող լինի...
 Մէկին հազար ձի և ջորի,
 Մէկին ո՛չ ու մի, ո՛չ մաքի:
 Մէկին հազար ղեկան ոսկի,
 Մէկին ո՛չ փող մի պըղնձի...
 Մէկին հարամն հաջողի,
 Մէկին հալալն կորուսի»¹:

Նույն այս մոնոմենտալ հակադրությունը Ֆրիկը տվել է նաև իր «Վասն գալեհի և բրջի» տաղում:

«Մէկն թագաւոր լինի, մէկուն աղքատ՝ մոխրին պառկած:
 Զայս ո՞նց դիտենալ կարենք, թէ զայս է՞ր ի հանց բաժանած:
 Մէկին ծերութիւն հասնի ու ամէն բարիք վայելած.
 Մէկին գերութիւն հասնի, կամ տղայ օրօք նա մեռած,
 Կամ ինքն է ի մօրէ ցաւած կամ անդամալոյծ է ծնած:
 Շատ մարդ հասրաթով դեմ կան ի ներքև հողին պառկած,
 Մտօքս այս բանիս վերայ շատ մի ժուլ ի հողս եմ անկած,
 Կասեմ թէ այս է՞ր եղեր, զոր պամէնն հաւասար չէ զուգած»²:

Ֆրիկի այս հատվածից երևում է, որ անվանի բանաստեղծը երկար ժամանակ մտածելիս է եղել կյանքի ու մահվան, տնտեսական ու սոցիալական անհավասարության մասին, թե ինչո՞ւ «պամէնն հաւասար չէ զուգած»: Անշուշտ այս երկարատև մտորումների արդյունքն էր նաև նրա նշանավոր «Գանգատ»-ը, նրա վեճը, ցասումն ու բողոքը ուղղված երկնավոր դատավորին:

Կյանքի ու մահվան հակադրության, մահվան անողորմության վերոհիշյալ տեսարանը որոշ չափով փոփոխված ձևով Ֆրիկը տվել է նաև իր կրոնական բովանդակություն ունեցող տաղերում: «Ոտտնաւորք և հայերէն բաներս հոգեշահ» տաղում, օրինակ, կարդում ենք.

«Մինչ ածէ զմահն ու մօտէ և անողորմ դրօշն գայ,
 Ո՛չ ի ծեր կու խրնայէ, ո՛չ ի մանուկ՝ ո՛չ յերախայ...
 Զի ասել, թէ պարտական է կամ աղքատ և կամ տղայ,
 Զի խրդճալ յօտարականն, թող թէ հաղար դառն որ լայ:
 Անողորմրն բաժանէ զնոր պըսակած հարսն ու փեսայ...
 Հանց որբեր յետ կու թողու, որ սար ու ձոր ամէն կուլայ,
 Ի հիմնէ տուն կու քակէ, որ խսկի այլ շէն չի մրնայ.
 Հանց ցանկութիւն խափանէ, որ իւր նման խսկի չի կայ»³:

¹ Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 235—236:

² Դիվան, ԻԹ, 23—30 (էջ 386—387): Հմմտ. Բանաստեղծ., XL, 22—29 (էջ 227—228):

³ Դիվան, Թ, 5—19 էջ 293—295): Հմմտ. Բանաստեղծ., V, 2—14 (էջ 45—46):

Ֆրիկի կողմից շատ հաճախ գործածվող «ճակատագիր» ու «բախտ» հասկացողությունները արտահայտված են նրա կողմից «Ֆալաք», «դալեհ», «դովլաթ», «չարխ» հոմանիշ բառերով: «Գանդատ»-ի հեղինակը կրկին, խոսքն ուղղելով աստծուն, գրում է.

«Զդովլաթն, ասա թէ ո՞ւր լինի,
 Եւ բախտաւորն ո՞ւր գտանի,
 Որ ի շուրջ դամ տասն տարի,
 Եթէ կաթիլ մ' ինձ հանդիպի»¹:

Նույն այս միտքը, որոշ չափով ձևափոխված, գտնում ենք նաև «Վասն դալեհի և բրջի» տաղում.

«Զդովլաթն երբ կու աայ Աստուած, նայ, կու գայ ամէնն աջողած,
 Բայց զայն իմանալ պիտի, թէ դալեհն յո՞յր բուրջն է անկած»²:

Մի այլ տաղում Ֆրիկը իր մասին ասում է.

«Թէ լինէր ինձ դովլաթ և խելք ի բանի»³:

«Գանդատ»-ի հեղինակը, իրար հակադրելով անբախտի և բախտավորի վիճակը, գրում է.

«Անբախտն գայ ամօթալի,
 Հեղ և հանդարդ, առաքինի...
 Բախտաւորն գայ ճօճկտալի,
 Գայ և նստի յաւագ բարձի...
 Անբախտն ճորտ է աւագի
 Եւ անյաջող զերդ զգերի...
 Եւ բախտաւորն մեծարի,
 Բազում հարկիք նա ընդունի,
 Որ թէ կոյր է, միականի,
 Կամ խեղ և ծուռ միտտանի,
 Եւ զինչ այիպ առ նա լինի,
 Ամենեին այն շերևի
 Այլ յամէնից նա մեծարի
 Եւ իւր հարկիքրն շատ լինի:
 Ամէն ի բախտն գայ, կուտի,
 Թէ Աստուծոյ տուեալ լինի»⁴:

Անբախտի և բախտավորի, լավ և վատ մարդկանց այս նույն հակադրությունը նույնքան ուժեղ կերպով Ֆրիկը տվել է նաև «Ընդդէմ ֆալաքին» և «Վասն դալեհի և բրջի» բանքերում:

¹ Բանաստեղծություններ, 139—142 (էջ 237):

² Դիվան, ԻԹ, 8—9 (էջ 384): Հմմտ. Բանաստեղծ., XL, 7—8 (էջ 225—226):

³ Դիվան, ԼԹ, 63 (էջ 448): Հմմտ. Բանաստեղծ., XXVI, 60 (էջ 153):

⁴ Բանաստեղծություններ, XLI, 151—180, էջ 237—238:

Մեր կողմից նշված բոլոր փաստերը և «Գանգատ»-ի ու Ֆրիկի տարրեր տաղերից բերված հատվածների համեմատությունը (որոնց թիվը կարելի է բազմապատկել), ոչ մի տարակույս չեն թողնում, որ «Գանգատ»-ը Ֆրիկի ստեղծագործությունն է:

Բանասեր Տիրայրը գտնում է, որ Ֆրիկի ստեղծագործության մեջ արժեքավորը և գրականը նրա կրոնա-բարոյական երգերն են¹:

Մենք նույնիսկ հարկ չենք համարում բազմիցս աղացուցվածը կրկին աղացուցել: Պարզ է ու հասկանալի, որ Ֆրիկի կրոնա-բարոյական տաղերը չեն, որ բնորոշում են անվանի բանաստեղծի գրական դեմքը, չնայած նրանց քանակը շատ է և նրանց մեջ ևս մեծ տաղասացը շույլ կերպով շաղ է տվել իր մարգարիտները: Նրա «Ընդդէմ ֆալափին», «Վասն դալեհի և բրջի» և «Գանգատ» բանքերն են, որ Ֆրիկին ոչ միայն մի քանի գլխով բարձրացնում են իր ժամանակակիցներից, այլև նրան դարձնում են միջին դարյան հայ և համաշխարհային գրականության նշանավոր դեմքերից մեկը:

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ О ФРИКЕ И ЕГО СТИХОТВОРЕНИЯХ

А. Г. ЖАМКОЧЯН

(Р е з ю м е)

1. Многие исследователи Фрика неправильно объясняют отдельные части его произведения «Об Аргун-хане и Буге», так как не поняли встречающихся в них слов «масас» и «масасчи». По свидетельству Мухаммеда ибн Хиндусхан Нахичевани, дело снабжения монгольской армии военным обмундированием и снаряжением называлось «масас»; «масасчи» были поставщиками обмундирования; мастерские по производству обмундирования и снаряжения и склады для их хранения назывались «масас-ханэ».

2. Сочувствие Фрика, как видно из песни «Об Аргун-хане и Буге», было на стороне тех «масасчи» и в особенности их компаньонов, которые поставляли монгольскому правительству обмундирование и снаряжение для армии, но не получили денег по выданным им векселям.

3. Как видно из упомянутого произведения Фрика, а также из данных, сохранившихся в других его песнях, он был «ортахом» — компаньоном одного из поставщиков военного снаряжения, то есть одним из тех богачей, которые давали «масасчи» деньги в рост. «Свои средства, — говорит Фрик, — я дал на поток и разграбление разбойникам».

4. Прельстившись высокими процентами, Фрик стал компаньоном одного из «масасчи», разорился, обманутый им, и стал беспомощным, несчастным бедняком. Он впал в большие долги и даже заложил сына.

5. Исследователи часто смешивают упоминаемых в песне «Об Аргун-хане и Буге» исторических лиц с другими лицами, носящими те же имена. В статье указывается, что упомянутые в песне Буга, Арух, Тосман-Джосха (должно быть Тосман-Чуги), Таджар, Косчан и Султан-Агон были видными монгольскими эмирами, а Джеллаледдин, Сададол и Сахиб Диван (Мухаммед Джувеини) — визириями монгольских ханов и начальниками «Дивана», то есть податного-финансового управления. Они были тесно связаны с делом «масасчи».

¹ Դրվան, Բնական ուսումնասիրություն, էջ 230:

6. Вопреки утверждениям Аш. Иоаннисяна автор статьи находит, что известная песня «Против судьбы» написана Фриком не в 1295—1299, а в 1285—1286 годах. Песню «Об Аргун-хане и Буге» Фрик написал в июне — июле 1289 года, а песню «О Далехе и Брджи», по-видимому, — в 1290—1295 гг.

7. Творчество Фрика распадается на три периода. В молодости он писал любовные песни, поговорки и пословицы, до нас не дошедшие. В пятидесятилетнем возрасте, разорившись и обеднев, он стал писать гневные, полные бурного протеста песни, направленные против бога, судьбы, экономического и социального неравенства. До нас дошли только четыре из них: «Против судьбы», «Об Аргун-хане и Буге», «О Далехе и Брджи» и «Жалоба». Когда Фрику исполнилось приблизительно 60 лет, в его творчестве стала преобладать религиозно-нравоучительная тематика. В последний период жизни он создает песни о христианской любви, о прощении грехов, суетности мира, страшном суде.

8. Из многочисленных объяснений слова «Фрик» наиболее правильным кажется нам объяснение, данное М. Мкряном: «Фрик» буквально означает «опаленная недозревшая пшеница» (в смысле ущемленного судьбой, преисполненного горечи «опаленного» человека).

9. Автор статьи полагает, что Фрик родился в одном из находившихся под владычеством монголов ближайших к Киликии городов Западной Армении. Он бывал в Закавказье, Иране, в окрестностях озера Ван и в других местах.

10. Тщательно рассмотрев все три варианта песни «Жалоба» и сохранившиеся в них термины, автор, вопреки мнению других исследователей, приходит к заключению, что вариант, дошедший до нас под именем Фрика, написан в XIII—XIV веках и является произведением самого Фрика. Вариант, носящий имя Барсега, является литературной кражей, которая совершена в конце XV или в начале XVI века. Другой вариант, обозначенный именем Ованеса Саркавага, написан не на основании оригинала, а на основании варианта Барсега. Последний не имеет ничего общего со священником Барсегом из киликийского монастыря Хорин.